

Խմբագրական

ՈՂՋՈ՛ՅՆ ՍԱՐԴԱՐԱԿՈՒՄՏԻ 101-ԱՄԵՆԱԿԻՆ



Սարդարապատը մեր նորագոյն պատմութեան ամենէն փառապանծ էջերէն մէկն է, անտարակոյս, երբ հայկական Տեղասպանութենէն միայն երեք տարի ետք, հայ ժողովուրդը կրցաւ մահուան սեւ գեղէնէն ետք յարուբիւն առնել իր հրաշագօր ոգիով եւ նուաճեց իր ապրելու իրաւունքը:

Արդարեւ, թուրքը՝ կոտորելէ ետք մեր ժողովուրդի արեւմտեան կէտը, ամայացնելէ ետք արեւմտահայութեան բազմահազարամեայ բնօրրանը իր բնիկ ժողովուրդէն, անսանձ ու անպատիժ կը սպառնար միւս կէսին վրայ՝ 1918-ի Մայիսեան ճակատագրական օրերուն, եւ կը յառաջանար դէպի Երեւան ու Ս. Էջիածին, դէպի «սիրտը մեր երկրին, մեր հաւատքին, մեր կենսագրութեան», դէպի վերջին մնացորդ բուռ մը հողը, որպէսզի գայն եւս բզբտէր եւ յետոյ չարահնդար, ըսելով. «Կար հայ ազգ, ա՛լ ան չկայ, եւ մենք ենք անոր տան ու հողի տէրը»...

Բախտորոշ այդ պահուն, սակայն, հինաւուրց մեր ժողովուրդը դարերու խորքէն եկող ոյժ գտաւ իր մէջ, զարթնեցան իր մէջ՝ իր հերոսական նախնիներէն ժառանգած Զայկեան ազատաբաղձ արիւնն ու ոգին, Աւարայրի ոգին, եւ թէեւ՝ ուժասպառ ու արիւնաքամ, գերագոյն լարումով ոտքի ելաւ ան ազգովի՛ն, դարձաւ ահեղ բռունցք եւ ետ մղեց անարգ թշնամին, նուաճելով իր յաւէտ ապրելու եւ յարատեւելու իրաւունքը:

Երիտթուրքերու վատահամբաւ առաջնորդներէն Պեհաետօին Շաքիր այսպէս կը բացատրէր իր կառավարութեան քաղաքական ծրագիրը հայկական պատուիրակութեան պետ՝ Աղէքսանդր Խատիսեանին.- «Զայերդ կանգնած էք մեր համիւլամական ու համաթրքական սրբազան բաղձանքներու իրականացման ճամբուն վրայ, եւ մենք, ուզենք թէ չուզենք, կը բախուինք ձեզի հետ: Այդ բախումը վեր է եւ դուրս՝ մեր անձնական զգացումներէն ու տրամադրութիւններէն: Մենք տարերայնօրէն հարկադրուած ենք ոչնչացնել այն ամենը որ արգելք կը հանդիսանայ այդ սրբազան բաղձանքներու իրականացման»: Սա, ըստ էութեան, համաթուրանական կամ Մեծ Թուրանի ձեւաւորման ձգտող մեծ երազն էր:

Լքուած առանձինն, առանց որեւէ արտաքին օգնութեան եւ ստոյգ մահուան դէմ յանդիման՝ հայ ժողովուրդը ցուցաբերեց հաւաքական արտակարգ ոյժ ու վճռակամութիւն՝ հերոսաբար ծառանալու հայակու թշնամիին դէմ եւ պաշտպանելու իր պապենական հողերէն մնացած վերջին կորիզը: Չինուորագրուեցան բոլորը, երիտասարդն ու ծերը, հարուստն ու աղքատը, բանուորն ու շինականը, հոգեւորականն ու մտաւորականը, տեղացին ու գաղթականը...:



Հայուհիներ՝ 5-րդ դարու Հայ Տիկնանց օրինակով, ջերմեռանդօրէն կը պատրաստէին պարէնի եւ ջուրի պաշարներու հերթական բեռները եւ զանոնք կ'առաքէին կռուողներուն: Յայտնի հայագետ եւ Էջմիածնի Գեորգեան ճեմարանի տեսուչ Գարեգին Սրբազան Յովսէփեանց կը ոգեւորէր եւ օրհասական մարտի կը մղէր հայոց զօրքերը, որպէս նոր օրերու Ղեւնդ Երեց: Ամենուրեք կը թեւածէր Աւարայրի ոգին: Մայր տաճարի եւ բոլոր եկեղեցիներուն զանգերը այդ օրհասական օրերուն անընդմէջ կը ղօղանջէին և այդ ղօղանջը կը տարածուէր Արարատյան դաշտավայրի բոլոր անկիւններէն, իբրեւ ահագանգ ու մարտակոչ գերագոյն վտանգին դէմ յանդիման:

Մայիս 24-ին, Երեւանեան զօրախմբի հրամանատար գեներալ Մ. Սիլիկեանը կոչով կը դիմէր հայ ժողովուրդին.

«Հայե՛ր, շտապեցէ՛ք հայրենիքն ազատելու: Հասել է պահը, երբ իւրաքանչիւր հայ, մոռանալով իր անձնականը, յանուն մեծ գործի՝ հայրենիքի փրկութեան և իր կնոջ ու աղջիկների պատուի պաշտպանութեան, պիտի գործի դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարուածելու համար...

Յանուն բազմաչարչար հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան, յանուն ոտնակոխ եղած ճշմարտութեան: Ոտքի կանգնեցէք: Դէպի գործ, դէպի սրբազան պատերազմ...»:

Եւ այսպէս, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսէի եւ Սարդարապատի յաղթական հերոսամարտերով կը փրկուէր Արարատեան երկրի այն մի բուռ հողը՝ որպէս մեր ազգի սուրբ հայրենիքի անկորնչելի կորիզը: Ծնունդ կ'առնէր Հայաստանի անկախ հանրապետութիւնը Մայիս 28, 1918-ին: Դարաւոր պայքարներէ եւ ցաւատանջ տառապանքներէ ետք, կը վերականգնէր մեր պետականութիւնը՝ մեր պատմական հայրենիքին մէկ տասներորդ տարածքին վրայ եւ վեց դարեան պետականազուրկ իրավիճակէն կը բարձրանայինք պետական ազգի մակարդակին:

Սարդարապատի վսեմաշունչ օրինակով, հրացայտ կը ժայթքէր՝ 1988-ին, Արցախը Հայաստանին վերամիացնելու միլիոնանոց երթ-բողոքը Երեւանի փողոցներուն մէջ եւ կը հրաշակերտուէր արցախեան պանծալի յաղթանակը՝ մեր քաջ որդւոց սուրբ արիւնով...Եւ դարձեալ Մայիս ամսուան մէջ կ'ազատագրուէր Շուշին, 1992-ին, ինչպէս նաեւ կ'ազատագրուէին արցախեան աշխարհի մեր նախնեաց այն սուրբ հողերը, որոնք շաղախուած են հայուն հազարամեայ քրտինքով ու աճիւնով սրբազան...

Ներկայիս, Սարդարապատէն 101 տարի ետք, հայութիւնը ազգովին կը գտնուի նոր մարտահրաւերներու դիմաց, որոնց արդիւնաւետ դիմակայումը կը պահանջէ Սարդարապատեան միասնական ոգի, համայն հայութեան միասնական ուժերու առաւելագոյն զօրաշարժ:



Սարդարապատը կը յուշէ որ մեր ժողովուրդը կրնայ հրաշքեր գործել եթէ իր մէջ արթուն է ազգի անկոտրում ոգին, որ կը շաղախէ ազգի առանձին միաւորները մէկ հզօր եւ անկարտելի հաւաքական ՄԵՆՔ –ի մէջ...

Համաթուրանական վտանգը՝ թուրք-ազերիական սերտ գործակցութեամբ եւ «մէկ ազգ, երկու պետութիւն» գաղափարախօսութեամբ, դեռեւս առկայ փաստ է եւ կը շարունակէ սպառնալ այսօրուան Հայաստանի լինելութեան, Արցախի հետ միասին, ինչ որ անհրաժեշտօրէն կը պահանջէ կերտել հզօր Հայաստան եւ վերակազմակերպուած Սփիւռք, համատեղ ուժերու ամենէն սերտ ու համակարգուած գործակցութեամբ:

Հզօր Հայաստան՝ որ կարենայ հարազատ հայելին ըլլալ ազգային մեր երազներուն եւ իղծերուն, մեր տեսլականին, որ կարենայ ազատ, արդար, արժանավայել կեանք ստեղծել ազգի զաւակներուն, որ կարենայ ճիշդ հայելին ըլլալ ազգային մեր ինքնութեան, հայ մշակոյթին, հայ արժեքներու ամբողջութեան եւ ուղղորդողի ազգային գաղափարախօսութեաբ ու ծրագիրով...., որ կարենայ զարգացման իրապաշտ եւ միաժամանակ խիզախ եւ յանդուգն հեռանկարներ ստեղծել մեր երկրին ու ժողովուրդին, համայն ազգին..., որ խօսի սրտին ու մտքին մէն մի հայուն, ո՛ր որ ալ ապրի ան, եւ դէպի իրեն քաշէ զայն, որպէս լուսաւոր փարոսը համայն հայութեան...Նման Հայաստանի մը հիմքերը սկսած են կեանքի կոչուիլ 2018-ի թաւշեայ յեղափոխութեամբ, բայց դեռ շատ բան կայ ընելիք, մանաւանդ դատա-իրաւական ոլորտէն ներս, որ անհկա իսկապէս դառնայ շօշափելի, տեսանելի յեղափոխութիւն եւ տարածուի հայրենական կեանքի բոլոր բնագաւառներուն մէջ..., հեռու մնալով յատկապէս ազգն ու հայրենիքը պառակտելու միտող բոլոր քայլերէն: Քանզի հիմա եւս, ինչպէս միշտ, մեր փրկութիւնը միայն ու միայն մեր հաւաքական ոյժին մէջ է:

Ինչ կը վերաբերի Սփիւռքի իրականութեան, աներկբայ իրականութիւն է որ միայն հզօր Սփիւռք մը կրնայ անփոխարինելի ու կենսական աջակից ու զօրակից ըլլալ Հայաստանին: Իսկ զօրաւոր Սփիւռքը կ'ենթադրէ վերակազմակերպել եւ նոր հիմքերու վրայ դնել անոր հաւաքական կեանքը՝ իր դպրոցներու ցանցով եւ հայեցի կրթութեամբ, իր Պահանջատիրական արդար Դատի պայքարով, իր մարդուժի արդիւնաւետ օգտագործումով....

Հայաստան-Արցախ-Սփիւռք հաւաքական, միասնական ուժի գոյառումով միայն, մենք կրնանք յաջողութեամբ դիմագրաւել թրքական, ազրայեյճանական, համաթուրանական թէ այլ սպառնալիք, լիարժեք ՏԵՐ կանգնիլ մեր բոլոր իրաւունքներուն, ազատագրեալ Արցախէն մինչեւ Արարատը մեր պանդուխտ, կերտել արժանապատիւ, զարգացող, յառաջդիմող երկիր, շարունակելով մեր քաղաքակրթական երթը դէպի նորանոր հազարամեակներ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Կիպրահայ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 104-ՐԴ ՏԱՐԵԼԻԾԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԼԽԱԻՈՐ ՁԵՌՆԱՐԿ-ՈԳԵԿՈՉՈՒՄ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ



Կիպրահայութիւնը՝ մէկ սիրտ, մէկ հոգի, միացած հոգեւին ամբողջ հայութեան հետ՝ հայրենիքի, Արցախի եւ ի սփիւռս աշխարհի, ոգեկոչեց հայկական Ցեղասպանութեան 104-րդ տարելիցը, խոնարհելով մեր մէկ ու կէս միլիոն սրբադասեալ նահատակներու յիշատակին... ուր « սիրտերը քովէ-քով եղան մէկ խորան...», խորան՝ խունկ ու աղօթքի, խորան՝ ոգեկոչումի... այլեւ իմաստութեան, պահանջատիրական պայքարի վերանորոգման: Խորան՝ նորոգ ուխտի, հասնելու մեր վախճանական նպատակին՝ մէկ ամբողջական հայութեան եւ մէկ ամբողջական

Յայաստանի

Յայկական ցեղասպանութեան 104-րդ տարելիցի ոգեկոչման Կիպրոսի գլխաւոր ձեռնարկը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2019-ին, կ. ե. ժամը 5:30-Էն սկսեալ, երբ երիտասարդական քայլարշաւը սկիզբ առաւ Նիկոսիոյ «Չինա Կանթեր» փողոցէն, որուն յետոյ միացաւ հոծ բազմութեան միացեալ քայլարշաւը՝ Արմենիաս պողոտայէն մինչեւ Նահատակաց յուշարձան, գլխաւորութեամբ Պետ. Ներկ. Տիար Վարդգէս Մահտեսեանի, Թեմական եւ Վարչական մարմիններու ներկայացուցիչներու, Ցեղասպանութեան Ոգեկոչման Կիպրոսի Յանձնախումբի անդամներու, որոնց կը հետեւէր համայնքիս անդամներու մարդաշատ բազմութիւն մը, ուր ուշագրաւ էր ՀՄԸՄ-ի հայ սկաւտներու, երիտասարդներու աշխոյժ մասնակցութիւնը՝ դրօշակներու եւ պաստառներու ուղեկցութեամբ:

Ժամը 7:30-ին, բոլոր մասնակիցները համախմբուեցան Նիկոսիոյ Նահատակաց յուշարձանին առջեւ, ուր տեղի ունեցաւ Ոգեկոչման ձեռնարկը, ներկայութեամբ

պետական բարձրաստիճան անձնաւորութիւններու, կուսակցապետներու, խորհրդարանականներու, կիպրահայ թեմական-վարչական, կրթական եւ ազգային այլ մարմիններու անդամներու, կիպրահայ եւ կիպրացի յոյն հանրութեան հոծ բազմութեան:

Տերունական աղօթքի միաբերան երգեցողութենէն ետք, հնչեցին Հոգեհանգստեան աղօթքներ մեր նահատակներու հոգիներուն համար, միասնական երգեցողութեամբը՝ Կիպրահայ Թեմի Կաթ. Փոխ. Տէր Խորէն Արք. Տողրամաճեանի, Տէր Մաշտոց եւ Տէր Մովսիկ քահանայ Յայրերու: Ապա խօսք առաւ Տէր Խորէն Արք. Տողրամաճեան, որ շեշտեց այն կարեւոր փաստը որ Թուրքիոյ գործադրած եւ ցարդ անպատիժ մնացած Հայոց Ցեղասպանութիւնը դուռ բացաւ նորանոր ցեղասպանական արարքներու՝ մարդկային եւ մշակութային, մեր ժամանակներուն եւս..., որոնց մէջ ուղղակի թէ անուղղակի կայ Թուրքիոյ ծանրակշիռ մեղսակցութիւնը: Ան յատկապէս ըսաւ,



որ հայը ջարդուեցաւ, տեղահանուեցաւ, աքսորուեցաւ, բռնաբարուեցաւ եւ իր Գողգոթան բարձրացաւ, բայց կրցաւ ան յարութիւն առնել, քանզի այսօր մենք ունինք անկախ հայկական Յանրապետութիւն, Արցախի հետ միասին, ունինք հայկական բանակ, հայկական դրօշ, հայկական համայնքներ ի սփիւռս աշխարհի, աւելցնելով որ մեր նպատակը տկարութիւն չի ճանչնար եւ մենք պիտի հասնինք մեր յաղթանակին:

Այնուհետեւ, խօսք առաւ կիպրահայ համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան, որ արձանագրելէ ետք երիտթուրքերու ազգայնամոլ, մոլեռանդ քաղաքականութիւնը, որ կը նպատակադրեր Մեծ Թուրան ստեղծելու ցնորամիտ երազը եւ որուն հետեւանքով 1915-1923 թուականներուն զոհ գացին մէկ ու կէս միլիոն հայեր, դատապարտեց այժմու Թուրքիոյ վարած ժխտողական քաղաքականութիւնը, որ կը գործադրուի հետեւողականօրէն եւ ծրագրուած կերպով: Հակառակ ասոր, նշեց ան, ուրախ ենք այն իրողութեան համար, որ վերջին տարիներուն, դրական քայլեր առնուած են աշխարհի շատ մը երկիրներու կողմէ Հայկական Տեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ: Վերջերս, Ֆրանսա Ապրիլ 24-ը հաստատեց որպէս հայոց ցեղասպանութեան յիշատակի օր: Երախտագիտութեամբ անդրադարձաւ Կիպրոսի Հանրապետութեան, որ առաջինն էր Եւրոպական Միութեան մէջ պաշտօնապէս ճանչնալու հայկ, Տեղասպանութիւնը եւ անոր ժխտումը քրեօրէն պատժելի արարք դարձնելու օրինագիծի ընդունումով: Նման քայլեր մեզ լաւատես կը պահեն, թէ նախկին դարու առաջին ցեղասպանութեան համաշխարհային ճանաչումը շատ հեռու չէ, եզրափակեց ան:

Ապա խօսք առաւ Ստրովոլոսի քաղաքապետ՝ Տիար Անտրէաս Պապախարալամպուս, որ դատապարտեց Թուրքիոյ ժխտողական քաղաքականութիւնը՝ առերեսուելու իր պատմութեան սեւ էջերուն հետ: Ան ընդգծեց որ հայկական ցեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը զգացականութեան խնդիր չէ, այլ մարդկային իրաւունքի, արդարութեան եւ արժանապատուութեան, մարդկային բարոյական արժէքներու, եւ յոյս յայտնեց որ վաղ թէ ուշ պիտի գայն այն օրը, երբ Թուրքիան եւս պիտի առերեսուի իր պատմութեան հետ եւ ճանչնայ հայկական ցեղասպանութիւնը, ներողութիւն խնդրելով հայ ժողովուրդէն:

Ոգեկոչման աւարտին, Ս. Աստուածածին Մայր Եկեղեցւոյ երգչախումբը, ղեկավարութեամբ Տիկ. Նառա Սարգարեանի, դաշնակի ընկերակցութեամբ երեցկին Թամար Հապէշեանի, կատարեց ազգային-հայրենասիրական երգերու փունջ մը, որնց մէջ յատկապէս՝ «Ատանայի ողբը» եւ «Հայրենիքիս հետ» սիրուած երգերը, ինչ որ հայաշունչ իւրայատուկ մթնոլորտ մը փոխանցեց ոգեկոչման ձեռնարկին:

Հոսկ, յուշակոթողին ծաղկեպսակներ գետեղեցին պետական պաշտօնական անձնաւորութիւններ, ինչպէս նաեւ կիպրահայ կեանքի ազգային-եկեղեցական կառոյցները ներկայացնող անձինք:

Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի:

ԱԶԱՏ ԽՕՍՔ



ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Արժեքաւոր հասարակութիւն մը ունենալու համար, չի բաւեր ունենալ՝ բարօրութիւն, օրէնքի գերակայութեան գործադրութիւն, առողջապահական եւ յարակից կարիքներու լաւ համակարգ....Այս բոլորին հետ միատեղ եւ այս բոլորէն գերիվեր, կայ հոգեւոր-բարոյական-մշակութային արժեքներու ա՛յն մթնոլորտը, որ ընդհանրական եւ անհատական կեանքին կու տայ կեանքի իմաստ, ապրելու նպատակ, կոչում թէ առաքելութիւն, ինչ որ մարդկային կեանքը կ'ընծայէ մանրակերտը արարչականին կամ աստուածայինին....

.....

Գրելը ներքին պահանջք է, ներքին մղում....2գացումներ, յոյգեր, խոհեր, մտորումներ կան որոնք ելք կը փնտռեն, ինքնարտայայտութեան դուռ մը կ'որոնեն....Գրելը լիցքաթափուիլ է, ինքնախոստովանանքի նման բան, թուղթին կամ պաստառին առջեւ, հաղորդակցութիւն՝ մտերիմի, բարեկամի....հետ..: Յայտնի ճշմարտութիւն է, որ ցաւը կը կիսուի զայն բաժնելով այլոց հետ, մինչ ուրախութիւնդ կը կրկնապատկուի, կը բազմապատկուի, երբ զայն հաղորդես այլոց...Գրելը կեանքը կրկնակի ապրիլ է...

.....

Օտարին հրամցուցած նոյնիսկ դառնահամ դեղահատը պատրաստ կ'ըլլանք կլլելու...բայց հարազատէն եկած ամենէն կառուցողական առաջարկն անգամ կը գտնենք անվստահելի, կասկածելի...եւ մեր կրաւորական վերապահութիւնը կը յայտնենք այս կամ այն ձեւով...եւ դեռ օտարը կը բարեբանենք, կը մեծարենք, անոր լեզուն, մշակոյթն ու ապրելակերպը կը պանծացնենք....եւ կը մոռնանք մերինը, մերիները, իյնալով օտարամոլութեան գիրկը...

.....

Նիւթի, շահի եւ հաճոյքներու համար ապրիլը՝ ապրիլ չէ, բառիս ամբողջական իմաստով, քանզի մարդը աշխարհ եկած է առաքելութեան մը համար, բարին գործելու, ճշմարիտը որոնելու, գեղեցիկը ստեղծելու եւ աշխարհի հոգեմտաւոր, բարոյական արժեքներուն վրայ բան մը աւելցնելու համար...: Գուցէ սա է պատճառը որ հոգեկան խոր գոհունակութիւն մը կ'ապրինք, երբ բարի գործ մը կատարենք, երբ գեղեցիկը կը ստեղծենք, երբ ճշմարտութեան կայծով մը կը լուսաւորուինք....մինչդեռ հոգեկան խոր անձկութիւն մը կ'ապրինք, երբ նիւթական շռայլութեան մեջ ենք, բայց մեր հոգիները կը մնան սովահար...



.....

Ուրախութիւնը փոքր բաներու մէջ է գերազանցօրէն...ներքին տրամադրութիւն մը՝ որ ընդունակ է գնահատելու կեանքի ու բնութեան ամենէն պարզ, սակայն խորքին մէջ խորին խորհուրդ պարունակող երեւոյթները... վերընծիւղող ծիլն ու ծաղիկը...կտոր մը կապոյտ երկինքը...մանկան մը ճիչը, ցորենի հասկը, թարմ հացի բուրմունքը սեղանին վրայ...Որքան կ'անտեսենք նման բնական ուրախութիւնները...քանզի մեր ուղեղները լուացուած են ազատ շուկայական «արժէքներով», որոնք օրն ի բուն կը քարոզուին...մղելով մարդը նիւթապաշտութեան, ընչաբաղոցութեան, շահամոլութեանեւ կեանքի բուն խորհուրդը անտեսելու անզգայութեան...

.....

Մեր երկրի ներքին ամրութեան գերագոյն երաշխիքը անոր հայեցի մշակութապահպանութեան մէջ կը կայանայ, հայ հոգիի ճշմարիտ հայելին ըլլալուն մէջ...Անհոգի հայրենիքը կը դադրի հայրենիք ըլլալէ, որքան ալ բարօր կեանքով ապրին անոր քաղաքացիները, որքան ալ շքեղ ըլլան անոր բնակարանները, պողոտաները, կառոյցները...Կարելորդ հոգին է ու ոգին, զորս պիտի կենսաւորել ու ծաղկեցնել, փայլեցնել ու զօրացնել հանապազ...

.....

Մենք երբե՛ք չհասանք պարկեշտ, անաչառ ինքնաքննադատութիւն կատարելու հեզութեան, խոնարհութեան, բարձրութեան..., բոլոր մակարդակներու վրայ ալ, միշտ ալ յիստորտալով, գոռոզանալով որ մեր ըրածն ու ըսածը ճիշդ են...Մենք արդեօ՞ք անսխալական ենք, թե՛ մեր սխալները ընդունելու բարոյական քաջութիւնն ու համեստութիւնն են որ կը պակսին մեզի..., ինչ որ նախապայման է ամեն յառաջդիմութեան...

.....

Եթէ ժողովուրդ մը, ազգ մը չի ձգտիր բարձրագոյն նպատակներու, չունի իր գոյութիւնը իմաստաւորող առաքելութիւն...այլ միայն կը գոհանայ գոյատեւելու ծերակուտական փափաքով, յայնժամ չի կրնար ան զարգացման թռիչք ունենալ, կեանքի նոր որակ ձեռքբերել...Կեանքը՝ անհատին թէ ժողովուրդին համար, ԻՆՔՆԱՆՊԱՏԱԿ չի կրնար ըլլալ, միայն՝ ապրիլ ապրելու համար...Կեանքը, ըստ Էութեան, բարձրագոյն արժէքներ ստեղծելու համար է, գեղեցկութեան, վեհութեան, ազնուութեան, սիրոյ, բարութեան...այլապէս ան պիտի դառնար սոսկ՝ ուտել-խմելու, զուարճանալու, հաճելի ժամանակ անցնելու...եւ սպառողական քաղաքակրթութեան մէկ յետին պտուտակը ըլլալու գոյութիւն եւ գոյատեւում...

.....

Ազգային ծրագրի Էական մասը հայեցի կրթութիւնն է որոշապէս, առանց որուն հայը, նոր սերունդը, քայլ առ քայլ կը հեռանայ իր ազգային ակունքներէն, արմատներէն, կը տարուի օտարին կեղծ ու խորթ «արժէքներ»ով, օտարանալով ազգային իր Էութենէն...: Ի՞նչ կ'արժէ Նոյնիսկ հզօր հայրենիք եւ պետականութիւն ունենալ, եթէ անոնք հայ մշակոյթի կրողը չեն, եթէ հոն մեծցող մատղաշ հոգիները զուրկ են հայ հոգիէ եւ ոգիէ...

.....



Մարդ էակը....Ո՞վ կրնայ լռիւ ըմբռնել զայն....Մերթ այնքա՛ն բարի է ու վեհ, ջերմսիրտ ու ազնիւ, մերթ ալ կը դառնայ քարսիրտ ու անգուրթ , չար եւ փոքրոգի....Մերթ կը բարձրանայ ոգեղէն թռիչքով, մերթ ալ կ'իյնայ վար տիղմի ու ցեխի մէջ....Բարին ու չարը կարծէք շարունակ պայթար կը մղեն իր ես-ին մէջ, ուր յաղթական կը դառնայ մէկը կամ միւսը....Բայց ինչպէ՞ս կը պատահի, որ ոմանք, հազուագիւտ անձինք, միշտ ալ բարի են ու ազնիւ, ներող ու լայնսիրտ, մինչ ուրիշներ կը մնան բարոյական տիղմին մէջ...Դաստիարակութիւնը վստահաբար ունի իր էական դերակատարութիւնը, կեանքի հանգամանքները՝ նոյնպէս, բայց գուցէ կան նաեւ այլ որոշիչ գործօններ...ինչպէս մէկու մը բնածին խառնուածքը կամ հոգեկերտուածքը...

.....

Յոգին հանդերձանք, զարդարանք չի սիրեր, ան լոյսի նման պարզ է, թափանցիկ, գեղեցիկ ինքն իր մէջ....Եւ ազատ, անսահմանափակ, անպարագիծ...: Մարդը, սակայն, յաճախ կ'ուզէ զայն շնչահեղձ ընել ցուցամուկական եւ փառամուլիկ պճնազարդերով....կ'ուզէ անոր ազատութիւնը կաշկանդել՝ պաշտօնի, դիրքի, ընչաքաղցութեան ճիրաններուն մէջ...: Թող հոգին սաւառնի ազատ երկինքն ի վեր, ճախրէ տիեզերքի անհունութեան մէջ եւ ցոլայ իր լուսափայլ պարզութեամբ, ինքնեկ շողարձակումով....Յոգին մարդ էակի ներքին լոյսն է...

.....

Ճշմարիտը փնտռելով՝ լուսաւորուեցայ...

Ճշմարիտը խօսելով՝ ազատագրուեցայ...

Ճշմարիտը գնահատելով՝ բարձրացայ...

Ճշմարիտը սիրելով՝ մաքրուեցայ...

ԵՐՎԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Յօդուածներ

Կարօտանքով եւ Երախտագէտ Սրտով

8 Ապրիլ 2013

(Բայց նոյն այժմէականութեամբ... Ազատ Խօսք)



Ամահ լուսոյ ճշմարտութեան բարիին,

Տաճարն է այս սրբանուէր թանկագին,

Ան մեզ տուաւ նահատակուած մեր ցեղին,

Չաւակները լաւագոյնը ու բարին.

Ամէն անգամ որ առիթը կ'ունենամ Կիպրոս այցելելու, անպայման կ'այցելեմ Մելգոնեան Կրթական Հաստատութիւն, ուր անցուցած եմ, պարմանութենէն դէպի երիտասարդութիւն, կեանքիս շաւիղը

հունաւորող, հանգրուանային, ամենէն աղուոր տարիները, անոր «լուսեղէն» յարկէն ներս:

Հպարտանքով եւ անհուն հրճուանքով կը մտնեմ անոր երկաթակուռ մայր դռնէն որուն դիմացը, փոքր հեռաւորութեան վրայ, աղջկանց ու մանչերու զոյգ, համանման եւ տպաւորիչ շէնքերուն միջեւ, վեհօրէն կը կանգնի, հայ ազգի անգուգական, անմահանուն բարերարներուն, աղա Գրիգոր եւ աղա Կարապետ Մելգոնեան եղբայրներուն հոյաշէն, քանդակագարդ դամբարան-յուշակոթողը աջին ու ձախին հանգչող անոնց պրոնզեայ կիսանդրիներով: Անհուն երախտագիտութեամբ կը խոնարհիմ անոնց ազգակերտ ընծայաբերումին եւ հոգիի մեծութեանը առջեւ, հոգեւին «Հայր մեր» մը եւ «Տէր Ողորմեա» մը կը մրմնջեմ, անոնց քաղցր, անմոռաց եւ ինկելի յիշատակին, այնպէս ինչպէս հին օրերուն... կը նստիմ անոնց շիրմին սանդխամտին վրայ եւ ի՛նչ խաբկանք, ի՛նչ աղուոր խաբկանք, կարծես ժամանակը կանգ կ'առնէ հոն, Մելգոնեանի այդ երանելի օրերուն, կ'երագեմ... կը վերյիշեմ... կը վերապրիմ դպրոցական «անփոյթ» տարիներու քաղցրութիւններն ու դառնութիւնները, կը շրջագայիմ ինծի այնքան ընտանի, սիրելի եւ յիշատակներով լի, խօսուն շրջապատը եւ կը վերանորոգուիմ, դպրոցական անդարձ տարիներու ապրումներով...:

Վերջերս, կրկին հնարաւորութիւնը ունեցայ այցելելու դպրոցս. բայց ոչ առաջուան պէս հրճուանքով եւ խանդավառութեամբ. այլ կոտրած, ցաւոտ սրտով, խռովքով, եւ ափսոսանքով. որովհետեւ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, ի սպառ փակած էր իր դռները, ուսումնատենչ հայ պատանիին ու պարմանուհիին առջեւ, խոր յուզում եւ վրդով պատճառելով իւրաքանչիւր Մելգոնեանցիի եւ համայն սփիւռքա- հայութեան: Մելգոնեանը անցեալ եւ պատմութիւն մըն էր այլեւս:



Յուզուած, կրօն քայլերով, թեթեւ զարիվերէն բարձրանալով, հասայ բարերարներուն դամբանին առջեւ. անոր ետին ուշադրութիւնս գրաւեց ինքնաշարժ մը, որուն կարեւորութիւն չտուի. սակայն յանկարծ ինքնաշարժին պատուհանէն երիտասարդ մը, մրափէն Նոր սթափած ըլլար կարծես, հարցուց անփութօրէն:

- Բա՞ն մը կ'ուզէիք տիկին.

Անակնկալի եկած, պատասխանեցի.

-Այո, պարոն. ես դպրոցս այցելելու եկած եմ. դո՞ւք.

-Ես հոս պահակ եմ. պահակութիւն կ'ընեմ. եւ ցոյց տալով աղջկանց շէնքը, աւելցուց.

-Հոն, Եւրոպական Միութեան մառաններն են. անոնց պահակութիւնը կ'ընեմ.

-Մառա՞ն, ի՞նչ մառան. ըսի ապշած.

Սարսուռ մը պատեց զիս եւ ցնցուած, խեղդուկ ձայնով, բայց տիրական շեշտով յարեցի:

-Ի՞նչ կ'ըսէք պարոն. ասիկա իմ դպրոցս է, գիշերօթիկ դպրոցս. եւ ցոյց տալով աղջկանց եռայարկ շէնքի վերին յարկը`

-Հոն, մեր ննջարանն էր. միջին յարկը դասարանները. գետնայարկը ճաշարանը. եւ դառնալով դէպի տղոց շէնքը եւ մատնացոյց ընելով շէնքի պատուհանէն դուրս զետեղուած մետաղեայ, հնամենի խոշոր զանգակը, շարունակեցի.

-Աս ալ այն զանգակն է որ կ'արթնցներ մեզ ամէն առաւօտ, ժամը եօթ ու կեսին : (Մինչեւ այսօր ալ ամէն առաւօտ երբ Նայուածքս կ'ուղղեմ ժամացոյցի սլաքներուն, ժամը եօթ ու կեսը ցոյց կու տան... յամառօրէն):

Երիտասարդը ազդուած լսածներէն, աւելցուց.

-Հիմա կը հասկնամ տիկին. անցեալ օրերուն ալ քանի մը հոգի եկած էին, այսպէս կը դիտէին իրենց շուրջը, բաներ մը ցոյց կու տային իրարու, կը խնդային, ոմանք յուզուած կ'երեւէին. չհասկցայ. կ'երեւի անոնք ալ ձեզմէ էին. ձեզի պէս էին. կը ներէք:

Ինչո՞վ յանցաւոր էր իրաւ պահակը որ այդ շեշտով խօսեցայ իրեն. իր գործը կ'ըներ ան. ես էի որ մանկունակ վերաբերում ունեցայ. տաս տարեկան տղու մը պէս, որուն ձեռքէն իր մէկ թանկագին իրը կ'առնէն...:

-Ափսո՞ս, մառան. Մելգոնեանը մառան. կը կրկնէի ինքիրեսս եւ գացի Նստայ բարերարներուն շիրմին սանդխամատին վրայ:

Հոն էին անոնք, ազգին երկու մեծերը. երկու երախտաւորները. աղա Գրիգոր եւ աղա Կարապետ Մելգոնեան եղբայրները. իրենց Նայուածքը ուղղած դէպի հեռուն, դէպի անհունը, լռութեան, ամայութեան մէջ մենաւոր:

Երբեմնի կենսուրախ, աղմկալի այս վայրին մէջ, այժմ կը տիրէ ճնշիչ, խորհրդաւոր լռութիւն, ամայութիւն, լքուածութիւն:



Չերգուիր այլեւս ամէն առաւօտ, տղոց շէնքին առջեւ «Անմահ Լուսոյ»ն. լուռ է զարթնումի խոշոր զանգակը. իր ոչ այնքան ալ հաճելի, ժանգոտած մետաղի ձայնով: Չի հնչեր Մեսրոպեան լեզուն. չի լսուիր հայ երգը, «Յոռովել»ն ու «Մարալօ»ն... չերգուիր «Յայր Մեր»ն ու «Տէր Ողորմեա»ն ամէն Շաբաթ երեկոները բարերարներու շիրմին վրայ:

Դադրած է պուրակներուն մէջ թռչկոտող ճնճղուկներուն ծլըլոցը. ո՞ր մնացին ծիծեռնակները որոնք ուրախ ճռուողիւններով եւ մեծ շրջաններ ընելով մեր ընդարձակ ննջասենեակին մէջ, կը վերաշինէին իրենց բոյնը եւ առաւօտները զարթնումի զանգակէն առաջ կ'արթնցնէին մեզ: Չեն ճեմեր տղաքն ու աղջիկները իրենց շէնքերուն դարպասին մէջ, եւ խօսուն նայուածքներ հեռուէն չեն հանդիպիր իրարու...: Չորցած է աքասիան որուն ճիւղերը լայն բացուած, աթոռ մը ձեւացուցած ըլլային կարծես եւ ուր, անոր շուքին տակ նստած, Մեծարենց, Չարիֆեան, Դուրեան, Տէրեան... կը կարդայինք:

Ի՞նչ եղան մատենադարանի հազարաւոր Մեսրոպագիր գրքերը, քարտեզները, արխիւները...:

Չկան այս բոլորը:

Յոն են սակայն անոնք.բարերարները. լուռ վկաները այդ փառաւոր անցեալին. որոնց աննախընթաց նուիրատուութեամբը հիմնուեցաւ հայապահպանումի, հայակերտումի, մարդակերտումի, «անմահ լուսոյ սրրբանուէր տաճարը». Մելգոնեան Կրթական Յաստատութիւնը, որ դարձաւ սփիւռքահայութեան կրթօճախներուն կեդրոնական, առանցքային սիւներէն մէկը, եթէ ոչ առանցքայինը: Եղաւ խորհրդանիշը հայ ժողովուրդի գոյատեւելու կամքին, հաւատքին, ձեռներեցութեան, հայ մշակութային արժէքներուն: Դարձաւ հայութեան պարծանքը եւ օտարներու հիացումի առարկան, արժանանալով անոնց գնահատանքին եւ յարգանքին:

«Թուրքը մեզ քարոզեց. գլխատեց մեր վարիչները եւ ապա անտէր ազգը. իմ դպրոցս պէտք է մեր վրէժը լուծէ. այդ որբ ձագուկները պէտք է իրենց հօրենական տունը շինեն եւ անոնցմէ պէտք է պատրաստենք մեր նոր սերունդը»:

Այս էր իտեալը, Մելգոնեան եղբայրներուն, որոնք յատուկ զարգացում ալ չունէին, իրենց մականունը գով կը գրէին, թրքերէն լեզուով հայերէն տառերով կը թղթակցէին. բայց ազգասէր եւ հոգեւին հայեր էին. կը հաւատային թէ համապարփակ հայեցի դաստիարակութեամբ, բարոյական եւ հոգեմտաւոր արժէքներով տոգորուած սերունդներ պատրաստելով միայն, կարելի է վրէժ լուծել եւ ապագայ հայ մարդը կերտել: Եղեռնը, հայ ազգին դէմ գործուած ոճիրը, անբաւ վիշտ եւ զայրոյթ առթած էր անոնց :

Ուստի, լուսամիտ եւ հեռատես, եղբայրները, եղեռնէն որբ մնացած զաւակներու ճակատագրով եւ ազգին ապագայով մտահոգ, իրենց երկար տարիներու ձեռնհասօրէն վաստակած հարստութիւնը, ամբողջութեամբ, վեց հարիւր հազար անգլիական հնչուն ոսկի, ընծայաբերեցին հայ ազգի զաւակներու կրթութեան, անոր մատակարարումը յանձնելով Զ. Բ. Ը. Միութեան:

Անոնց առաջնահերթ մտահոգութիւնը, հայ որբերուն պատսպարան, սնունդ հայթայթել էր. գրկել, սփոփել եւ միաժամանակ հայեցի կրթութիւն քամբել:

Կառուցուեցան աղջկանց եւ մանչերու համանման պատկառելի գոյգ շէնքերը, գեղեցիկ վիլլան, բարերարին որպէս բնակարան, որ հետագային յատկացուեցաւ տնօրէններու որպէս



բնակարան եւ բարձրահայեաց, հոյակապ ջրամբարը, Նիկոսիայէն երկու մղոն հեռաւորութեան վրայ գտնուող, լերկ, խոպան հսկայ տարածութեամբ (460 x 400 մէթր) բլրակի մը վրայ, որ հետագային, այդ անհրապոյր վայրը վերածուեցաւ պուրակներով, պարտեզներով ծաղկաստանի մը ու հոգեմտաւոր զարթօնքի անդաստանի մը, որ հայացուելով կոչուեցաւ Ծաղկաբլուր:

Սկզբնական շրջանին հաստատութիւնը, իր ջերմ թելերուն մէջ պատսպարեց ու դաստիարակեց եղեռնեան սերունդը եւ յարաբերաբար կարճ ժամանակ մը ետք ուռճացաւ, հզօրացաւ եւ ժամանակներու ուսումնական եւ կրթական պահանջներու յառաջընթացին զուգահեռ հունի մէջ մտնելով, աստիճանաբար հասաւ բարձրագոյն երկրորդական վարժարանի մակարդակին, իր ճեմարանական բաժինով եւ երկու տարուան մասնագիտական, երեք ճիւղերով: Մանկավարժական, առեւտրական, գիտական եւ իր գիշերօթիկ ըլլալու հանգամանքով եւ առաւելութեամբ, ընծայեց ծաւալուն ասպարեզ, արտադպրոցական եւ արտադասարանային ստեղծագործական աշխատանքի, գեղարուեստական, մարզական, հրատարակչային, արեւոյշական եւ այլ հետաքրքրու թիւններու մարզէն ներս:

Անոր յարկին տակ ջամբուած համապարփակ հայեցի դաստիարակութեամբ, հոն, ուր յար կը հնչէր հայոց լեզուն ու երգը, կը ծաղկէին գիրն ու դպրութիւնը, արուեստն ու գիտութիւնը, հոն ուր անաղարտ կը պահուէին մեր բարքերը, աւանդներն ու քրիստոնէական հաւատքը, կազմաւորուեցաւ Մելգոնեանցին: Ապագայ հայուն, ապագայ մարդուն եւ քաղաքացիին տիպարը: Կազմաւորուեցաւ անոր անբասիր նկարագիրը ու ձեւաւորուեցաւ անոր աշխարհահայեացքը:

Մելգոնեանցին հպարտ է իր մելգոնեանցիութեամբ եւ երախտագէտ, որ արժանացած է մելգոնեանցի ըլլալու բախտին:

Մելգոնեանը հայ պարմանին ու պարմանուհիին համար եղաւ անոր հարազատ տունը: Այդ նոյն յարկին տակ միասին ապրելով, միասին նոյն ջուրէն խմելով, նոյն օդը շնչելով, նոյն, երբեմն անժուր, ապուրը ճաշակելով, միասին մեծ ընտանիք մը եղան. շաղախուեցան իրարու. դարձան կաթոգին քոյրեր ու եղբայրներ: Միասին խնդացին, միասին լացին, երգեցին ու մխիթարեցին զիրար: Միասին մտիկ ըրին իրենց համակրանքներուն եւ ինչու չէ իրենց առաջին սիրոյ սրտի տրոփիւնները եւ միեւնոյն գրչով գրեցին իրենց կարօտի նամակները: Հոգեւին, անբակտելի կապերով կապուեցան իրարու, իրենց ուսուցիչներուն, իրենց շէնքին, շրջապատին հետ որ անոնցմէ բաժանուամը միշտ ալ եղաւ դժուար ու դառն:

Անկէ տողանցեցին փաղանգ մը ատակ եւ ականաւոր ուսուցիչներու. ինչպէս՝ Յակոբ Օշական, Վահան Թեքէեան, Վահէ Վահեան, Պօղոս Գեորգեան, Վահան Պետելեան, Ներսէս Թամամեան, Նշան Յովհաննէսեան, Վահրամ Մաւեան, Բիւզանդ Եղիայեան եւ վերջին «մոհիկանը»՝ Սեպուհ Աբգարեան, որոնք իրենց մտքի լոյսը, ճաճանչ առ ճաճանչ եւ հոգիի արժանիքները շիթ առ շիթ, տուին իրենց աշակերտներուն, հայ ազգի զաւակներուն տուած ըլլալու հոգեկան բաւարարութեամբ:

Մելգոնեանցիները իրենց կարգին, երախտագիտութեամբ եւ հաւատարիմ բարերարներուն թողած պատգամին ու աւանդին, իրենց մտքին ու հոգիին մէջ ամբարած լոյսը սփռեցին իրենց բնակած երկրի ազգային կեանքի բնագաւառէն ներս, որպէս ուսուցիչ, որպէս բանաստեղծ ու գրագէտ, որպէս հանրային կամ ազգային գործիչ, որպէս արուեստագէտ եւ շատեր՝ իրենց



աշխատանքային մարզի ճամբով իրենց անվերապահ ներդրումը ունեցան ազգակերտութան, հայակերտութան «վսեմ» գործին:

Մելգոնեան Կրթական Հաստատոթիւնը մօտաւորապէս երեք քառորդ դար, մերթ տատասկոտ, մերթ լուսաշող երկար ճանապարհներ կտրելով, կարողացաւ դիմագրաւել խոչընդոտներ, փոթորիկներ եւ յաղթական դուրս գալ, միևնույն քանի մը տարի առաջ որ չկարողացաւ դիմագրաւել հաւանաբար անանցանելի խոչընդոտներ եւ «ազգին լուսեղէն տունը», «Ամմահ Լուսոյ Տաճարը» փակեց իր դռները լուսատեսչ պարմաններուն ու պարմանուհիներուն առջեւ, անստոյգ եւ անորոշ թողելով իր առաքելութեան շարունակութիւնը եւ ապագան:

Մելգոնեանի փակումով փոլ եկաւ հայակրթութեան հիմնական սիւներէն մէկը: Քանդուեցաւ, սփիւռքահայութեան ձուլումի, նահանջի, ապագայնացման կլափին դեմ կանգնած կուռ հսկայ պատնէշը: Հայութիւնը, սփիւռքահայութիւնը, աղքատ է այսօր, զրկուած ըլլալով անոր կենսատու ուժէն, գաղթօճախներուն ներմուծած աւիշէն ու աւիւնէն: Մելգոնեանի ներդրումին ու ծառայութեան պակասը զգալի պիտի ըլլայ մանաւանդ երբ նօսրանան շարքերը եւ չգան նորեր լրացնելու թողուած բացը:

Երէկ, սպիտակ ջարդ կ'ըսէինք սփիւռքահայութեան նահանջին, ձուլումին: Այսօր, համաշխարհայնացում կ'ըսենք միեւնոյն այդ աղէտին, որ կը սպառնայ մեր գաղթօճախներուն հայօրէն գոյատեւման, ազգային ինքնութեան պահպանման:

Երէկ, Շահան Շահնուր կ'ահագանգէր... «Կը նահանջեն ծնողք, որդի, կը նահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սեր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք կը նահանջենք բանիւ եւ գործով կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՛յ, մեղա՛յ Արարատին»: Այսօր ալ միեւնոյն ահագանգն է որ կը հնչէ:

Այդ նահանջին եւ ուժացման դեմ մեր դիմադրական ուժը, մեր վահանը, թումբն ու պատնէշը, մեր կրթօճախներն են ու մեր հաւատքը: Թոյլ չտանք որ քանդուին պատնէշները: Թոյլ չտանք որ փակուին դռները մեր կրթօճախներուն: Թոյլ չտանք որ շիջի բոցը «Լուսոյ Վառարան»ներուն. եթէ իսկապէս կը հաւատանք անոնց վերապահուած հայակերտ առաքելութեան, եթէ իսկապէս կ'ուզենք հայօրէն գոյատեւել, եթէ իսկապէս կ'ուզենք որ նորահաս սերունդները թրծուին, ազգին մեծ բարերարներուն եւ բիւր նահատակներուն աւանդ թողած «հայ ազգին վրէժը» լուծելու, հայ դատին տէր կանգնելու, ազգային գիտակցութեամբ, հաւատքով ու կամքով:

Երեկոն իջաւ ցած, քաղաքը, տակաւ առ տակաւ սկսաւ լուսաւորուիլ. բայց ոչ զոյգ շէնքերն ու շրջապատը...:

Պիտի վառին արդեօ՞ք վերստին լոյսերը Մելգոնեանի. պիտի վերադառնան արդեօ՞ք ծիծեռնակները. պիտի հնչէ՞ հայոց լեզուն, երգն ու աղօթքը անոր սրահներուն մէջ, պիտի ճեմեն արդեօ՞ք տղաքն ու աղջիկները դարպասին մէջ կրկին. պիտի հնչէ՞ ժանգոտած մետաղի ձայնով զանգակը, որ հաւաքուին սաներն ու սանուհիները բարերարներուն շիրմին շուրջը «Տէր Ողորմեա»ն երգելու. պիտի երգուի՞ արդեօք վերստին «Ամմահ Լուսոյ»ն. եւ օրինեալ օր մը պիտի բացուին արդեօ՞ք դռները ...:

Շաքէ Էլմասեան

Տեսակէտ

Փաշինեանին «Հպարտ»-ը

(Հայաստանի խաղաղ յեղափոխութեան առաջին տարեդարձին առիթով)

Գրեց՝ Պետրոս քինյ. Շիթիլեան



Անցեալ տարուան Հայաստանի թաւշեայ խաղաղ յեղափոխութիւնը ցնցեց ամբողջ ազգը: Այդքան տարիներու յուսախաբութենէ ետք, երբ կը թուէր, որ հայրենիքը վերջնանապէս պիտի ընկղմեր ճահիճի մը մէջ, բան մը որ կրնար նոյնիսկ կործանիչ հետեւանքներ ունենալ, ահա այդ պահուն հայրենի ժողովուրդը իր քունէն սթափեցաւ ու ամենակարեւորը՝ խաղաղ համազգային շարժումով մը վերջ

դրաւ փտած վարչակարգին: Այսպիսի խաղաղ-թաւշեայ յեղափոխութիւն մը երկրորդն էր պատմութեան մէջ Չեխոսլավաքիոյ 1989-ի յեղափոխութենէն ետք:

Յեղափոխութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանը դարձաւ երկրի առաջին դէմքը: Երկիրը սկսաւ ազատօրէն շնչել ու երեւցաւ յոյս, որ չկար նախկին վարչակարգի ժամանակ: Բացի յոյսէն, հպարտութեան զգացում մը յառաջ եկաւ, որ նոյնպէս գոյութիւն չունէր ատկէ առաջ: Փաշինեանը, հանրային շարժումներու արդէն փորձուած գործիչը, շատ լաւ ըմբռնեց պատմական պահին ընձեռած հնարաւորութիւնը: Ան ճիշդ եզրեր գտաւ ժողովուրդը ներշնչելու ու գօտեպնդելու համար: Յեղափոխութեան նշանաբանը ռուսերէն «տուխով» բառը դարձաւ, որ բառացիօրէն «հոգիով» կը նշանակէ, բայց իմաստայնօրէն անելի ճիշդ պիտի ըլլար զայն թարգմանել՝ «յանդուզն» կամ «յանդուզութեամբ»:

Լայն զանգուածներու հետ գործ ունենալու վարպետ Փաշինեանը բացի տուխովէն, ուրիշ ոչ-պակաս կարեւոր բառ մըն ալ յաճախ կը գործածէ երբ կը դիմէ ժողովուրդին՝ ըլլա՛յ հանրայնօրէն, ըլլա՛յ համացանցի միջոցով: Այդ բառը այս անգամ հայերէն՝ «հպարտ»-ն է: Ամէն անգամ երբ ան կը դիմէ ժողովուրդին, կ'ըսէ. «Հայաստանի Հանրապետութեան հպարտ քաղաքացիներ»: Ուրիշ հանճարեղ փաշինեանական հնարք մը, որ լաւ հասկնալով նախորդ շրջանին յատուկ՝ ժողովուրդին նուաստացման ու ստորակայութեան զգացումները, մատը վերքին վրայ դնելով կոչ կ'ուղղէ Հայաստանի մեր եղբայրներուն ու քոյրերուն հպարտ ըլլալու, Հա՛յ ըլլալուն համար հպարտ ըլլալու, նման բացառիկ խաղաղ պատմական յեղափոխութիւն մը իրագործելուն համար հպարտ ըլլալու ու մա՛նաւանդ հպարտ ըլլալու ու այլեւս երբեք թոյլ չտալու ներքին թշնամիին, որ նորէն իշխանութիւն զաւթէ: Նուաստացման մթնոլորտը ամենէն ցաւոտ եւ աչքի զարնողն էր նախորդ շրջանին, որ միայն ներքին հարց չէր, այլ՝ արտաքին: Ասոր մէկ կարեւոր հետեւանքը նախորդ վարչակարգին նուաստացուցիչ արտաքին քաղաքականութիւնն



Եր, երբ ըլլալով տկար՝ ներքին ու արտաքին ճակատներուն վրայ, շատ յաճախ լուռ կը մնար մեր թշնամիներուն ու նոյնիսկ «բարեկամ»ներուն կատարած նուաստացուցիչ քայլերուն դիմաց:

Ահա Փաշինեանի «հպարտ»-ն է «տուխով»-ին հետ միասին, որ կնիքը հանդիսացան այն ոգեշնչութեան ու խանդավառութեան մթնոլորտին, որ մանաւանդ յատուկ էր յեղափոխութեան օրերուն: Այդ զգացումները այնքան զօրաւոր էին, որ ամբողջ ազգը ոտքի հանեցին, շատեր – անոնց մէջ ըլլալով տողերուս հեղինակը,– նոյնիսկ ոտքի ելան ու ճամբորդեցին Յայաստան ապրելու ու նպաստելու համար պատմական պահին: Ահա այս ոգեշնչման մթնոլորտն է յեղափոխութեան առաջին ու կարեւոր նուաճումներէն մէկը: Որպէս վկայ կրնամ հաստատել, որ ազգի հոգին քանդեց դաւաճան վարչակարգին ստեղծած պատերը ու դուրս ժայթքեց այնպիսի մեծ ծաւալով ու ուժգնութեամբ, որ հիմքը կը դնէր «Նոր Յայաստան»-ի ինքնամաքրման, յառաջխաղացքին ու հզօրութեան:

Իրականութեան մէջ յեղափոխութիւնը սկսաւ 2016 Ապրիլին, երբ թիւով մօտաւորապէս հարիւր մատոյց երիտասարդներ իրենց նահատակութեամբ վիժեցուցին մեծերուն կողմէ ծրագրուած – ու հաւանական ներքին մեղսակցութեամբ– այն հակահայկական ծրագիրը, որ կը միտէր լայն հողեր գրաւելու Արցախի այսպէս կոչուած յարակից շրջաններէն ու նոյնիսկ բուն Արցախէն: Այդ ծրագրին յաջողութիւնը կրնար ակելի խորացնել մեր հայրենիքի տագնապը ու դառնալ համազգային ճգնաժամ: Հակառակ լաւ ծրագրաւորման, այս ծրագրին շատ սահմանափակ «յաջողութիւնը»՝ որ իրականութեան մէջ ձախողութիւն մըն էր, փաստեց որ չնայած երկար տարիներու ընթացքին Յայաստանի մէջ տիրող նուաստացուցիչ մթնոլորտին՝ ԱԶԳԻ ՀՈԳԻՆ, ազգային արժանապատուութեան հոգին, հոգին մեր հերոսներուն դեռ կենդանի է ու կանգուն, որ ինչքան ալ զօրաւոր ըլլար ներքին թշնամին, ան չէր կրցած թուլացնել այն հոգին, որ մեր մայրերուն կաթին հետ նոր սերունդներուն կը ներարկուի: Ահա Ապրիլեան պատերազմին հերոսներն էին նաեւ «Յայաստանի Հանրապետութեան հպարտ քաղաքացիները»: Ասոր հետեւեցաւ մեր «խենթ»-երուն՝ «Սասնայ ծռեր»-ուն 2016-ի ամռան գործողութիւնը, որ հաստատեց ու անկասկած ցոյց տուաւ, որ հակառակ բոլոր անկումներուն՝ հայ վրիժառու բռունցքը դեռ կայ ու կրնայ հարուածել դաւաճան դրսեւորումները:

Վերը յիշուած երկու եղելութիւնները պետք էր, որ նախազգուշացում մը ըլլային նախորդ վարչակարգին թէ՛ ազգի արժանապատուութեան հետ խաղալը իր սահմանը ունի, թէ ինչքան ալ պետական հսկողութիւնն ու նիւթական կարողութիւնները զօրաւոր ըլլան՝ տեղ մը կայ, ուր նիւթը չի կրնար դեմ դնել հոգիին, մեր ազգային հոգիին, այն հոգիին որ մեր հերոսական գոյատեւման գաղտնիքը հանդիսացած է: Հակառակ Սարգսեանի 2014-ի յայտարարութեան, թէ ոչ մէկ պարագայի տակ երրորդ ժամանակշրջանի մը համար Յայաստանի ղեկավար պիտի ըլլար, ըլլա՛յ որպէս նախագահ, ըլլա՛յ որպէս վարչապետ, բայց ահա դարձեալ նոր Սահմանադրութեան պատրուակին տակ ան «ընտրուեցաւ» վարչապետ, խեղկատակութիւն մը՝ երբ հին վարչակարգը ի՛նքը կայծը տուաւ ազգի քնացած հոգիի զարթնումին, որ իր կարգին առաջնորդուեցաւ Յայոց պատմութեան նոր «խենթ» Փաշինեանի սկիզբը անյոյս թուացող քայլարշաւով:

Առաջին արդիւնքներ. Յեղափոխութիւնը երկար սպասել չտուաւ դրական իր առաջին արդիւնքները: Մա՛նաւանդ, Սփիւռքի մէջ ահազանգուած արտագաղթի վտանգը որակական բարելաւում մը արձանագրեց յեղափոխութենէն անմիջապէս ետք, երբ ըստ 2018-ի



վիճակագրութիւններուն՝ երկար տարիներ ետք, առաջին անգամ ըլլալով հայրենիք վերադարձողներուն թիւը մօտաւորապէս քսան հազարով գերազանցեց լթողներունը: Միւս կողմէն, եղծանումը իշխանութեան վերին մակարդակին՝ դադրեցաւ, վերջ տալով նախկին վարչակարգի ժամանակ Յայաստանի տնտեսութեան ամենամեծ թերութիւնը հանդիսացող մենաշնորհումներուն եւ ամօթալի հանդիսացող՝ բարձր պաշտօնեաներուն՝ մեծ ծաւալի գործարքներու մէջ շահաբաժինով պարտադրաբար ընդգրկուելուն:

Յեղափոխութեան առաջին շրջանին կարելոր նուաճումներէն մէկը եղաւ նաեւ անցեալ Դեկտեմբերին Ազգային ժողովի ազատ ու արդար ընտրութեան անցկացումը, որ անկախ Յայաստանի պատմութեան մէջ երկրորդն էր 1991-ի ընտրութենէն ետք ու արժանացաւ միջազգային մարմիններու անվերապահ հաւանութեան ու գնահատանքին:

Արցախ. Ինչ կը վերաբերի Արցախի հարցին, հոս ալ ակնյայտօրէն արձանագրուեցաւ բարելաւում ու Յայաստանի դիրքերու ամրապնդում: Վարչապետ ընտրուելուն առաջին օրէն սկսեալ Փաշինեանի յայտարարած՝ Արցախը բանակցութիւններուն մասնակից դարձնելու պահանջը դրական նշան մը եղաւ «Նոր Յայաստան»-ի Արցախեան հարցի նկատմամբ նոր քաղաքականութեան: Միւս կողմէն, Պաշտպանութեան նախարար Տօնոյեան Յայաստանի ռազմավարական համակարգին մէջ յարձակողական մարտավարութեան ընդգրկման մասին յայտարարեց, բան մը որ չկար նախորդ վարչակարգի ժամանակ եւ որուն իրականացման ապացոյցներէն մէկը եղաւ ռուսական Սու-30 յարձակողական ռազմօդանաւերուն ձեռքբերումը: Ասոր վրայ պետք է անելցնել յեղափոխութենէն ետք Յայաստանի միջազգային վարկին բարձրացումը, որ անելի զօրացուց երկրին դիրքերը ընդդէմ Ազերպայճանին: Աստիճանաբար ու հետեւողականօրէն Ազերպայճանի ոտքի տակէն սկսան քաշուիլ այն տարբեր առաւելութիւնները, որոնք վերջինս ձեռք բերած էր նախորդ տարիներուն իր նիւթական կարելիութիւններուն շնորհիւ ու Յայաստանի տկարութեան պատճառով: Այս բոլորին արդիւնքը եղաւ սահմանին վրայ՝ Ազերպայճանի կատարած հրադադարի խախտումներուն մեծ չափով նուազումը ու թշնամիին օգտագործած յարձակողական ու զաւթողական յայտարարութիւններուն անհամեմատօրէն թուլացումը, որոնք անելի ներքին օգտագործման համար կը կատարուէին, բան մը որ յատուկ է արեւելեան մենատիրական վարչակարգերուն, ինչպէս Ազերպայճանը: Անձնական մակարդակի վրայ Փաշինեանի ու Տօնոյեանի զաւակներուն Արցախի մէջ զինուորական ծառայութեան մեկնումը զօրաւոր նշան մը եղաւ «Նոր Յայաստան»-ի ղեկավարներուն նուիրումին ու վճռակամութեան: Նման բան չէր եղած նախորդ վարչակարգի ժամանակ, երբ օրինակ Քոչարեանի երկու զաւակները իրենց ծառայութիւնը երեւանի մէջ ձեւականօրէն կատարած էին, իսկ Տէր Պետրոսեանինը՝ Շամշատիի մէջ: Վերջին շրջանին կարելոր եղելութիւններէն մէկը եղաւ Յայաստանի և Արցախի ապահովութեան խորհուրդներուն միացեալ նիստին առաջին անգամ ըլլալով Ստեփանակերտի մէջ գումարումը ու այդ նիստի ընթացքին Փաշինեանի տուած կարելոր պատգամը: Իսկ վերջին՝ Փաշինեան-Ալիեւ Վիեննայի հանդիպումը տեղի ունեցաւ Յայաստանի համար նախորդ հանդիպումներէն անելի նպաստաւոր մթնոլորտի մը մէջ, մանաւանդ որ հանդիպման ճիշդ նոյն օրը Պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեան Նիւ-Եորքի մէջ հայկական գաղութի հետ հանդիպման ժամանակ յայտարարեց. «Տարածքներ՝ խաղաղութեան դիմաց»-ի փոխարէն «Նոր պատերազմ՝ նոր տարածքների դիմաց» կարգախօսը, որ «Նոր Յայաստան»-ի նոր ու հզօր մօտեցման մասին կը խօսէր: Տօնոյեանի վերջին յայտարարութիւնը Փաշինեանը կնքեց ըսելով. «Եթէ Դաւիթ Տօնոյեանը այլ յայտարարութիւն անէր, ես նրան կ'ազատէի Պաշտպանութեան



Նախարարի պաշտօնից»: Հայաստանի մէջ գործող քաղաքական վերլուծաբանները առանց խտրութեան,– անոնց մէջ ըլլալով Փաշինեանը քննադատողներ ալ,– ողջունեցին «Նոր Հայաստան»-ի այս նոր քաղաքականութիւնը: Մէկ խօսքով Հայաստանը հոս դարձեալ կիրարկեց «հպարտ» ըլլալու հանգամանքը ու այդ մէկը իրագործեց յանդակութեամբ (տուհով):

Արտաքին քաղաքականութիւն. Հայաստանը նաեւ հպարտօրէն սկսաւ յարաբերիլ աշխարհին հետ: Փաշինեանին «հպարտ»-ը հոս արդէն ակնյայտօրէն սկսաւ իրագործուիլ: Հայաստանի համար ամենէն կարեւոր դաշնակցային-ռազմավարական յարաբերութիւնները Ռուսաստանի հետ դադրեցան ստորակայական ըլլալէ, սկսան վերածուիլ դաշնակցայինի: Ըլլալով անկախ, չփճացած ու մանաւանդ իր թիկունքին զգալով ազգին մեծամասնութեան աջակցութիւնը, Փաշինեան սկսաւ ինքնավստահօրէն խօսիլ Ռուսաստանի հետ, բան մը որ աւելի հաւասարե-հաւասար նախադրեալները ստեղծեց հայ-ռուսական յարաբերութեան համար: Հասկնալով ու պահելով հանդերձ Ռուսաստանի հետ ռազմավարական յարաբերութիւնները «Նոր Հայաստանը» աւելի անկախօրէն սկսաւ յարաբերիլ աշխարհին հետ: Ասոր կարեւոր մէկ նշանն էր Փաշինեանի վերջերս Իրան կատարած պատմական պաշտօնական այցելութիւնը, որ այդ երկրին կողմէ բացառիկ ուշադրութեան արժանացաւ, հիմքը դնելով ապագայի յարաբերութիւններու լայնածաւալ ու խորքային զարգացման: Այս այցելութիւնը իր որակով եւ ծաւալով շատ աւելի մեծ էր Հայաստանի նախորդ ղեկավարներուն Իրան կատարած կարճ ու աշխատանքային այցելութիւններէն: Միւս կողմէն, կարեւոր յառաջընթաց արձանագրուեցաւ Եւրոպական Միութեան հետ յարաբերութիւններուն մէջ, որուն սատարեց վերջինիս ցուցաբերած լուրջ հետաքրքրութիւնը Հայաստանի նկատմամբ եւ որուն կարեւոր պտուղը հանդիսացաւ Հայաստանի տրամադրուած եօթը հարիւր միլիոն եւրօ վարկը: Հոս կարեւոր է նշել, որ Ռուսաստան իր գործադիր բարձրագոյն իշխանութեան մակարդակով հասկացողութիւն ցուցաբերեց ու ընդունեց «Նոր Հայաստան»-ի նոր արտաքին քաղաքականութիւնը, նկատի ունենալով որ հոն ցանկութիւն ու նոյնիսկ միտում չկայ Ռուսաստանի հետ դաշնակցային-ռազմավարական յարաբերութիւնները խզելու: Ընդհակառակն, այդ յարաբերութիւններուն մէջ նոր կարեւոր տարրեր աւելցան եւ այդ մէկը Հայաստանի մասնակցութիւնն էր Ռուսաստանի կողքին Սուրիոյ մէջ մարդասիրական առաքելութեան, իսկ Ռուսաստանի կողմէ՝ Հայաստանին բարենպաստ պայմաններով ծախուած Սու-30 ռազմօդանաւերը: Այս երկու կարեւոր հանգամանքները ինքնին ապացոյց մը եղան Հայաստան-Ռուսաստան պետական բարձր մակարդակի վրայ եղած յարաբերութիւններուն կայուն բնոյթին:

«Նոր Հայաստան»-ի անկախ քաղաքականութեան համար լուրջ փորձաքար է Ամուլսարի հարցը, որ ոսկիի հանք մըն է նոյնանուն լեռնազագագաթին շուրջ Վայոց Ձորի եւ Սիւնիքի մարզերու սահմանին: Ասոր օգտագործումը մեծ դժգոհութիւն յառաջուցած է շրջակայ մարդոց առողջութեան վնասելու մտավախութեան պատճառով, բան մը որ հեռու չէ իրականութենէն: Յստակ է, որ ինչ-ինչ պատճառներով Ամուլսարի օգտագործման համաձայնութիւնը ստորագրուած էր նախորդ վարչակարգին կողմէ ու ներդրում կատարող ամերիկեան «Լիտիան» ընկերութիւնը արդէն մօտաւորապէս մէկ միլիառ ամերիկեան տոլար ծախսած է: Հարցը դեռ վերջնական լուծում չէ գտած: Վերջին նորութեան մասին Փաշինեան վերջերս յայտարարեց. "Ամուլսարի հետ կապուած մամուլում ընկալում կայ՝ վա՛յ, «Լիտիան»-ը դիմում է միջազգային դատարան, ուրեմն վերջ, կորանք ազգովի: Դիմում է՝ թող դիմի: Ինչո՞ւ մենք մեզ այնքան անպաշտպան ենք զգում, ով ուզի կարող է մեզ անկիւն քշել: Այո՛, որոշ միջազգային



խաղացողներ կան, որ գալիս են, ասում՝ կը դիմեն միջազգային դատարան եւ ուշադիր նայում են: Եւ երբ տեսնում են որ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը չի ուշաթափուում, իրենք են վատանում, իրենց ճնշումն է վատանում՝ ո՞նց, մեզանից չէ՞ք վախում...ո՛չ, չենք վախենում, Էդ դուք մեզանից պետք է վախենաք, եթէ վախենալու բան կայ, եւ ոչ մենք ձեզնից": Ազգային ժողովի ամպիոնէն արտասանուած այս խօսքերը արդէն շատ բան կ'ըսեն: Մեծ յոյսով եմ, որ Հայաստանը յաղթական դուրս պիտի գայ նախորդ վարչակարգէն ժառանգած այս կնճռոտ հարցէն:

Տնտեսութիւն. Յստակ է, որ ամենէն հիմնական հարցը տնտեսական վիճակին բարելաւումն է: Հասկնալի է, որ տուեալ հարցը աւելի բարդ է ու ժամանակ կը պահանջէ համեմատելով միւս հարցերուն եւ իրականութեան մէջ միւս հարցերը սերտօրէն կապուած են տնտեսութեան վիճակին հետ: Պատահական չէ, որ վերջին ընտրութիւններէն յետոյ Փաշինեանը կը խօսի տնտեսական յեղափոխութեան մասին: Այս բնագաւառին մէջ դեռ շօշափելի դրական փոփոխութիւնները շատ չեն ու չեն կրնար ըլլալ: Յուսալի նշան մըն էր նոր ստացուած այն տեղեկութիւնը, որուն համաձայն այս տարուան առաջին եռամսեակի պետական պիւտճէն 11,4 միլիարդ դրամով աւելի իրագործուած է (մօտաւորապէս 23.500.000 ամերիկեան տոլար), ժողովուրդին՝ վաճառքի հարկը աւելի լաւ վճարելուն շնորհիւ, բան մը որ նախապէս տեղի չէր ունենար: Փաստօրէն ժողովուրդը կը լսէ այդ մէկը ընելու պետութեան ու Փաշինեանի կոչերը ու այսպէսով կը մասնակցի «Նոր Հայաստան»-ի տնտեսութեան բարելաւման գործին, բան մը որ շատ կարեւոր է: Վերջերս ուրիշ կարեւոր նշան մըն էր նաեւ այն հանգամանքը որ համաշխարհային Moody's վարկանշային կազմակերպութիւնը Հայաստանի ինքնիշխան վարկանիշի հեռանկարը եւ Հայաստանի դրամատնային համակարգի կանխատեսումը «կայուն»-էն բարձրացուց «դրական»-ի:

Անշուշտ, որ եկող քանի մը տարիներուն պիտի երեւի թէ իրականութեան մէջ ի՞նչ տեղի պիտի ունենայ տնտեսական բնագաւառին մէջ ու թէ վերջ ի վերջոյ այս բոլորը պիտի յանգեցնէ՞ ժողովուրդի տնտեսական մակարդակին փաստացի բարելաւման: Դուրսէն դիտողին համար տնտեսական վիճակին չափանիշը գիտնալու ամենէն լաւ միջոցը պիտի ըլլայ ամեն տարի Հայաստանէն մշտական հեռացողներուն ու մշտական վերադարձողներուն կամ տեղափոխուողներուն թիւերուն համեմատութիւնը: Ինչպէս վերեւ արդէն նշուեցաւ՝ անցեալ տարուան թիւերը լաւ նշաններ ցոյց տուած են, որ պէտք է տարուէ տարի աստիճանաբար բարելաւուին հասնելով մինչեւ լայնածաւալ հայրենադարձութեան:

Մտահոգութիւն. Նոյնիսկ եթէ Փաշինեանի ո՞վ ըլլալուն մասին գրեթէ բոլոր կասկածները փարատած են, բայց իրեն մօտիկ շրջանակներուն կամ յեղափոխութեան պատճառով պաշտօններ ստանձնած որոշ անհատներու մասին մտահոգուելու լուրջ հիմքեր կան: Ասոնցմէ ամենէն աչքի զարնողն է Ալէն Սիմոնեանը, որ յայտնի է իր ծայրայեղ ազատամիտ գաղափարներով: Սիմոնեանն էր նաեւ որ սկսաւ խօսիլ Ազգային փառերգը փոխելու մասին: Այս մտահոգութեան կապակցութեամբ յուսադրիչ պարագան այն է, որ յեղափոխութեան ժամանակ Փաշինեանէն ետք Արարատ Միրզոյեանի հետ հաւասար դիրք ունեցող Սիմոնեանը այսօր բաւական չափով գիջած է իր դիրքերը: Մինչ Միրզոյեան այսօր երկրի երկրորդ դէմքը կը հանդիսանայ Ազգային ժողովի նախագահը ըլլալով, Սիմոնեան անոր երեք տեղակալներէն մէկն



Է միայն: Փաստ է, որ Ազգային փառերգը փոխելու մասին խօսակցութիւնները վերջ գտան ու տեղ չհասան: Ըստ հաւաստի աղբիւրներու՝ ատոր ետեւը կանգնած էր նոյնիսկ Փաշինեանը, որ նպատակայարմար չէր նկատած Ազգային փառերգին փոփոխութեան հարցին արծարծումը: Այս նշան մըն է, որ յեղափոխութիւնը կարողութիւնը ունի ինքզինք ուղղելու, բան մը որ շատ կարեւոր է մանաւանդ նման շարժումներու պարագային:

Պատմութեան մեջ յեղափոխութիւնները կրնան տարբեր ուղղութիւններով երթալ: Ասոր համար չափազանց կարեւոր է ժողովուրդին զգաստութիւնը, որ ժամանակակից ընկերութեան մեջ կ'արտայայտուի քաղաքացիական ընկերութիւն հասկացողութեամբ (civil society): Յեղափոխութեան պահպանման ամենամեծ երաշխիքը ժողովուրդին աչքն է: Այնքան ժամանակ որ Փաշինեան կը յարգէ ազատութիւնները չսահմանափակելու իր խոստումները, մտահոգուելու կարիք պէտք չէ ըլլայ՝ պետութեան որեւէ շեղման հաւանականութեան առումով, որովհետեւ քաղաքացիական ընկերութիւնն է որ կը հսկէ, եթէ պէտք է կ'աղմկէ, կը բողբէ ու անհրաժեշտ պարագային ընտրութիւններով, իսկ ծայրայեղ պարագային նաեւ ըմբոստանալով կրնայ փոխել իշխանութիւնը: Այս ուղղութեամբ Փաշինեան դեռ մտահոգուելու առիթ չէ տուած, նոյնիսկ երբեմն մեղմ երեւցած է, երբ օրինակ գիտնալով հանդերձ, որ Հայաստանի լրատուական միջոցները ու համացանցային տարբեր աղբիւրները մեծամասնութեամբ կը պատկանին նախորդ վարչակարգին ու ատոր մօտիկ շրջանակներուն, նաեւ տեսնելով որ համացանցը լեցուն է «Նոր Հայաստան»-ին դէմ զանազան սուտ ու չարամիտ տեղեկութիւններով՝ ոչ մէկ քայլ առած է սահմանափակելու համար ատոնց գործունեութիւնը: Վերջերս էր միայն, որ Ազգային անվտանգութեան ծառայութեան յանձնարարեց պայթարիլ մանաւանդ ատելութիւն, բռնութիւն ու անօրինական արարքներու կոչ ընող աղբիւրներուն դէմ:

Քննադատութիւն. Ահա հոս պէտք է տեսնել ու վերլուծել Փաշինեանին ու «Նոր Հայաստան»-ին ուղղուած քննադատումները, որոնցմէ մաս մը ողջամիտ են ու հետեւաբար անհրաժեշտ, իսկ միւս մասը փողոցային մակարդակի ու սուտերու վրայ հիմնուած: Այսպէս. ըսուեցաւ որ Փաշինեանը Արցախը պիտի ծախէ: Իրականութեան մեջ հակառակը տեղի ունեցաւ: Հաւաստի աղբիւրներէն կարելի է հաստատել, որ Արցախի ղեկավարութիւնը ամբողջականօրէն գոհ է Արցախեան հարցի նկատմամբ «Նոր Հայաստան»-ի քաղաքականութենէն: Ըսուեցաւ, որ Փաշինեանին ետեւը Արեւմուտքն է, բան մը որ չի կրնար համապատասխանել իրականութեան, որովհետեւ եթէ նման բան մը իրական ըլլար, Իրանի հետ յարաբերութիւնները պէտք է վատանային: Դարձեալ՝ հակառակը պատահեցաւ: Փաշինեանին Իրան կատարած այցելութիւնը, նախորդ վարչակարգին յարող աղբիւրները կատարելապէս լռութեան մատնեցին, յար եւ նման ազերպայճանական աղբիւրներուն: Հայաստանի համար այդ այցելութեան դրական նշանակութիւնը այնքան մեծ էր ու բացայայտ, որ չէր կրնար քննադատուիլ: Ծիծաղելի գրառում մը կար Դիմագիրքի մեջ, որ Փաշինեանին՝ Նոր Ձուղայի հայկական գաղութը ետին երեւցող ինքնանկարի (selfie) համար կ'ըսէր. «Նայէ՛ք թէ Փաշինեանը ինչո՞վ է զբաղուել Իրանում»: Փաստօրէն փորելով-փորելով ուրիշ բան մը կարելի չէր եղած գտնել: Փորձուած ձեւը, անտեսելով դրական երեւոյթները, չափազանցելով ու գունազարդելով կեդրոնականն է որեւէ ժխտական երեւոյթներու վրայ, ինչքանով ալ քիչ նշանակութիւն ունենան ատոնք, հայկական ասացուածքի արտայայտութեամբ՝ «գաւաթին մեջ փոթորիկ ստեղծել» փորձելով:



Արդար հատուցում. Նախորդ վարչակարգին այս ընթացքը ցոյց կու տայ, թէ ի՞նչ խորունկ մակարդակի անկում ապրած է ան: Փոխանակ ընդունելու իր կատարած մեծ սխալները ու ծանր մեղքերը կամ Նուազագոյնը գո՛նէ լռելու, ան ամբարտաւանօրէն կը շարունակէ իր նախորդ ընթացքը, յոյս ունենալով՝ իշխանութեան վերադառնալ: Այս մէկը աւետարանեան այն իրողութեան հաստատումն է, որ երբ մարդը շատ յառաջ կ'երթայ մեղքի մէջ ու շատ խորունկ կ'ընկղմի աղտոտութեան մէջ, ապա կու գայ այն պահը երբ գիծ մը կայ որ կը հատէ, որմէ ետք անկարելի կը դառնայ վերադարձը դէպի զոջում ու ինքնամաքում: Աւելորդ պիտի չըլլար հոս նաեւ յիշել Գարեգին Նժդեհի խօսքերը. «Մեր դժբախտութիւնը այն չէ թէ աշխարհում կան Թուրքեր, այլ այն՝ որ կան թրքանման Հայեր»: Ահա հաւանաբար այս պատճառով էր, որ Փաշինեան կ'ըսէր թէ իրեն համար դժուար է լսել հին վարչակարգին կատարածներուն մասին գաղտնի զեկոյցները եւ որ ան կը պահանջէր օրական իրեն սահմանափակ քանակով ծրարներու մասին զեկուցել, որպէսզի կարելի ըլլար մարսել այդ դառն ճշմարտութիւնները: Որպէս օրինակ ան կ'ըսէր, որ պայմանագրեր ստորագրուած են, որոնց համաձայն հայաստանեան կողմը ուրիշ երկիրներու մէջ կատարուած ու Հայաստանի հետ կապ չունեցող համաձայնութիւններու խախտման պարագային՝ իր վրայ առած է տուգանքները վճարելու պարտաւորութիւնը: Ապագայի համար կը կարծեմ՝ իմաստուն պիտի ըլլայ չբացայայտել կատարուած ամէն խախտում ու չարաշահում՝ ազգի հոգեկան առողջութիւնն ու հաւասարակշռութիւնը պահպանելու համար:

Այս նիւթին հետ կապ ունի ու կարելոր է թէ՛ ո՞վ եւ որքանո՞վ պատիժ պիտի կրէ: Այս պատճառով իմաստուն է յայտարարուած մօտեցումը, ըստ որուն՝ սպանութիւններ հրահանգած ու կատարած անձինք պէտք է դատապարտուին, իսկ անոնք որոնք միայն նիւթական չարաշահումներ կատարած են, նմաններուն ներում շնորհուի, պայմանով որ՝ անոնք վերադարձնեն իրենց իւրացուցած ու ապօրինաբար ձեռք բերած նիւթական հարստութեան մեծ մասը: Հոս, անշուշտ առանցքային է Ռոբերտ Քոչարեանի պարագան, որ նախորդ վարչակարգի ստեղծման հիմնական պատասխանատուն է, օձին գլուխը ու կնքահայրը, որ պատասխանատուն է նաեւ զանազան հանգամանքներու տակ գործուած սպանութիւններու եւ որ Հայաստանի չափերը նկատի առնելով՝ կուտակած է ահռելի ծաւալի հասնող հարստութիւն, որ ըստ որոշ աղբիւրներու երեքէն միւսը չորս միլիարդ ամերիկեան տոլարի կը հասնի: Հակառակ դուրսէն եղած զանազան բարձր մակարդակի միջամտութիւններուն ու անգամ մը բանտէն դուրս ելլելուն, այդպէս ալ Քոչարեան կը մնայ բանտարկուած նախաքննութեան ժամանակ ու կարելի է յուսալ, որ իր արդար պատիժը պիտի ստանայ: Նոյնն է Մանուէլ Գրիգորեանի պարագան: Ինչ կը վերաբերի Սերժ Սարգսեանին, ապա շշուկ մը կայ, որուն համաձայն՝ անցեալ տարուան Ապրիլ 23-ին ան համաձայնութեամբ հրաժարած է վարչապետի իր պաշտօնէն, այն պայմանով որ ապագային չդատապարտուի: Յամենայն դէպս, դեռ քանի մը անուններ կան որոնք արժանի են դատապարտուելու: Անձնապէս հոս պիտի ուզէի աւելցնել պետական-ազգային դաւաճանութեամբ մեղադրուողներու դատապարտութեան անհրաժեշտութիւնը: Անձի պատիժէն աւելի՛ այդ պէտք է ընել, առաջքը առնելու համար ապագային՝ ազգադաւ նման քայլերու կրկնութիւններու:

Արդարադատութեան հարցը դիւրութեամբ չ'ընթանար, նկատի առնելով որ դեռ խորհրդային ժամանակէն այդ համակարգը ամենէն փճացած ոլորտներէն մէկը եղած է: Ահա այստեղէն կու գայ Քոչարեանն ու Գրիգորեանը բանտէն ազատելու հանգամանքները, որոնց հետեւեցաւ անոնց կրկին կալանաւորումը: Անշուշտ հոս «Նոր Հայաստանը» մեծ մարտահրաւերի մը դիմաց



կեցած է եւ այս մէկը արդարադատութեան համակարգին մաքրումն է, որ անհրաժեշտ ու գլխաւոր պայմաններէն մէկն է թաւշեայ յեղափոխութեան վերջնական յաղթանակին:

Վերջերս, այս ծիրին մօտիկ ուշագրաւ երկու եղելութիւններ արձանագրուեցան: Առաջինը. Հայաստանի Ազգային անվտանգութեան ծառայութեան պետ՝ Արթուր Վանեցեանի մօր վարչապետի անձնակազմին մէջ ունեցած գործէն հեռացուիլը. «Վարչապետի յանձնարարութիւնը ոչ պատշաճ կատարելու պատճառով», ինչպէս որ հաստատեց վարչապետի մամլոյ բանբերը: Իսկ երկրորդը. Փաշինեանի՝ իր մօտիկ ազգականներէն մէկուն օրինազանցութեան մասին պետական մարմինները տեղեկացնելը:

Կաշառակերութիւն. Ուրիշ կարելոր ու դժուար մարտահրաւեր մըն է կաշակեռութեան հարցը: Այդ հարցի յաղթահարման համար մեծ խոչընդոտ է պետական ամսականներուն ցած ըլլալու հանգամանքը: Հակառակ անոր, որ ամենաբարձր մակարդակի վրայ նշաններ չկան, որ կաշառակերութիւն տեղի կ'ունենայ, բայց եւ այնպէս՝ ոեւէ մէկը վստահօրէն չի կրնար ըսել, որ միջին ու աւելի ցած մակարդակներու վրայ այդ չարիքը վերացած է: Վերջերս հայաստանցի անձէ մը լսեցի, թէ կը ճանչնայ ոստիկան մը, որ մինչեւ յեղափոխութիւնը ամսական հինգ հարիւր ամերիկեան տոլար կը ստանար ու մօտաւորապէս հինգ հարիւր ալ անօրէն եկամուտ ուներ ու այդ եկամուտի հիման վրայ երկարաժամեայ վարկով տուն գնած է, իսկ յեղափոխութենէն ետք անօրէն եկամուտի բաժնին վերացման պատճառով այլեւս ի վիճակի չէ տան վարկին համար անհրաժեշտ ամսական իր վճարումները կատարելու: Նման պարագաներ շատ կան: Փաստուած է, որ համակարգային կաշառակերութեան յաղթահարումը կը սկսի վերէն, բան մը որ արդէն իրականութիւն է «Նոր Հայաստան»-ի մէջ: Կը մնայ, որ աստիճանաբար ու տնտեսական վիճակի բարելաւման համընթաց նուազի նաեւ կաշառակերութիւնը աւելի ցած մակարդակներու վրայ, հասնելու համար կարելի եղած նուազագոյն չափերուն:

Եկամուտներու բարելաւման չափ ու նոյնիսկ աւելի կարելոր է մարդոց գիտակցութեան փոփոխութիւնը եւ հոս յոյսը պետք է դնել աւելի շատ այն սերունդին վրայ, որ խորհրդային ժամանակէն ետք կազմաւորուած է, քանի որ խորհրդային շրջանին կազմաւորուած սերունդին մեծ մասը ամբողջ իր կեանքը ըլլա՛յ կամաւորաբար, ըլլա՛յ պարտադրաբար ապրած է գողնալով ու խարդախութեամբ: Նշանակալի էր վերջերս մեծ գումարներով կաշառք առնելու մեղադրմամբ՝ Առողջապահութեան փոխնախարարին ձերբակալութիւնը: Այս ձերբակալումը աւելի կարելոր կը դառնայ այն հանգամանքով, որ մեղադրեալը «Նոր Հայաստան»-ի շրջանին պաշտօն ստանձնած ղեկավարներէն մէկն է: «Նոր Հայաստան»-ի շրջանին ցայսօր կատարուած ամենաբարձր մակարդակի ձերբակալումն է այս մէկը: Եղածը յոյս կը ներշնչէ, որ նոր իշխանութիւնները լուրջ են կաշառակերութեան ու եղծանման դէմ իրենց պայքարին մէջ: Հայաստանի հետ շփումներս կը վկայեն, որ ժողովուրդին մակարդակով կաշառակերութիւնը անհամեմատ պակասած է: Հոս դարձեալ Փաշինեանին «հպարտ»-ը իր դերը ունի, որովհետեւ իսկապէս հպարտ մարդը ո՛չ կաշառք կու տայ և ո՛չ ալ կաշառք կ'առնէ:

Համակարգ. «Նոր Հայաստան»-ի հիմնական հարցերէն է այժմ ամէն ինչի հիմնուած ու կեդրոնացած ըլլալը Փաշինեանի անձին վրայ: Դեռ կազմակերպուած համակարգ մը չկայ: Նախորդ վարչակարգը ամէն ինչ յարմարցուցած էր իր կարիքներուն, որոնցմէ ամենէն ծանօթը Սերժ Սարգսեանը իր պաշտօնին պահելու համար վարչապետական համակարգի ստեղծումն էր: Իսկ հիմա պետք է ստեղծել նոր համակարգ, հիմնուած՝ ճիշդ նկրտումներու վրայ: Դիւրին պարտականութիւն մը չէ այս մէկը, մա՛նաւանդ պատրաստուած անձերու պակասին պատճառով:



Իշխանութեան «Քաղաքացիական պայմանագիր» դաշինքի՝ Ազգային ժողովին ջախջախիչ մեծամասնութիւնը կազմելու հանգամանքը մտահոգութեան առիթ կրնայ ըլլալ, եթէ իշխող խումբը չարաշահէ իր ուժը: Աշխարհը արդէն ստեղծած է այն համակարգը որ առաւելագոյն չափով կրնայ առողջ պահել ժողովրդավարութիւնը: Այդ համակարգի պարտադիր բաղադրեալներն են.– զօրաւոր ընդդիմութեան գոյութիւնը, իշխանութեան մէկ հոգիի կամ խումբի ձեռքը չկեդրոնանալը ու զայն բաժնելը, հսկողութեան իրական միջոցները... Եւ այլն: Այս բոլորը նպատակներ են, որոնք եկող տարիներուն պէտք է ստեղծուին ու ներկայիս Փաշինեանն է այն անձը, որուն կը վիճակուի ասոնց իրագործումը:

Սփիւռք. Հասկնալի է, որ Սփիւռքի նախարարութեան ջնջումը հարցումներ յառաջացուց: Իր կողմէն Փաշինեան եւ կառավարութիւնը բացատրեցին այդ փոփոխութիւնը աւելի գործունեայ ու արդիւնաւետ նոր համակարգի մը ստեղծմամբ, որ վարչապետի կառոյցին մէկ մասը պիտի ըլլայ ու պիտի կարենայ աւելի լաւ ձեւով համադրել Սփիւռքի հետ առնչութիւն ունեցող տարբեր կառոյցներու աշխատանքները: Այստեղ պէտք է սպասել՝ ի՞նչ ցոյց պիտի տայ ժամանակը: Միւս կողմէն, Սուրիա ուղարկուած մարդասիրական առաքելութիւնը կարելոր քայլ մըն էր, որուն մասին նախորդ վարչակարգը խօսեցաւ բայց չառաւ: Այս քայլի մասին Ազգային ժողովին մէջ հարցում-պատասխանի ժամանակ, Փաշինեան յստակ յայտարարեց, թէ նպատակը երախտագիտութիւն յայտնելն է Սուրիոյ ժողովուրդին,– որ Մեծ Եղեռնի ժամանակ օգնած էր մեր ժողովուրդին– ու նաեւ շօշափելի օժանդակութիւն ցուցաբերելը՝ սուրիահայ գաղութին: Չարմանալի էր, որ Փաշինեանի կարելոր այս յայտարարութիւնը աննկատութեան մատնուեցաւ Սփիւռքին կողմէ: Յիշուած քայլը կարելոր նշան մըն է եւ ցոյց կու տայ, թէ «Նոր Հայաստան»-ը կը ջանայ հոգատար ըլլալ Սփիւռքին նկատմամբ:

Ինչ կը վերաբերի Սփիւռքին՝ հոս անշուշտ նկատելի է վերջինիս մեծամասնութեան դրական վերաբերումը «Նոր Հայաստան»-ի նկատմամբ: Ասոր կարելոր մասը կու գայ նախկին Հայաստանցիներէն, որոնք աւելի լաւ պատկերացում ունին ու զգայուն են Հայաստանի նկատմամբ: Ուր որ Փաշինեան այցելեց, դիմաւորուեցաւ մեծ խանդավառութեամբ: Սակայն անհրաժեշտ է նշել ինչ-ինչ պատճառներով սփիւռքեան որոշ շրջանակներու վերապահութիւնը Փաշինեանի հանդէպ, բան մը որ ժամանակի ընթացքին յոյսով եմ պիտի բարելաւուի դրական ու փաստուած լուրերու ներգործութեամբ: Յամենայն դէպս, լաւ կ'ըլլայ որ այդ տեղի ունենայ ինչքան կարելի է արագ: Եզրակացութիւններ պէտք է ընել միայն փաստերու վրայ հիմնուելով եւ ոչ թէ նախապէս տրամադրուելով՝ յենլով ըսի-ըսաներու: Ժամանակակից արհեստագիտութիւնը ու տեղեկութեանց հասանելիութիւնը առիթ կու տայ անձնապէս կողմնորոշուելու ու ճիշդը սխալէն զանազանելու: Դաւադրութեան տեսութիւնը (conspiracy theory), որ Սփիւռքէն շատերուս մտածելակերպին յատուկ է, պէտք է հիմնուի փաստերու վրայ: Որեւէ բանի մը ետեւ անպայման Ամերիկան կամ Ռուսաստանը տեսնելու պարզունակ մօտեցումն է պէտք է ձերբազատիլ, որովհետեւ նման ենթադրութիւնները յաճախ իրականութեան չեն համապատասխաներ: Յստակ է, որ Փաշինեանը Ռուսաստանի «մարդ»-ը չէ, իսկ փաստերը հակառակը ցոյց կու տան շատերուն այն պնդումին, թէ Արեւմուտքն էր թաւշեայ յեղափոխութեան ետին: Վերջին տեսութեան անհիմն բնոյթին ամենամեծ ապացոյցը «Նոր Հայաստան»-ի Իրանին հետ յարաբերութիւնները զարգացնելու լուրջ ջանքն է ու Ռուսաստանի կողքին Հայաստանի մասնակցութիւնը՝ Սուրիոյ մէջ մարդասիրական առաքելութեան, քայլեր որոնք նախորդ վարչակարգի ժամանակ չէին առնուած: Հայաստան պէտք ունի Սփիւռքին: Երբ կը խօսուի տասը միլիոն Հայութեան մասին, նաեւ այդ մէկը պէտք է



վերածուի ՏԱՍԸ ՄԻԼԻՈՆՆՈՑ ԶԱՅԱՍՏԱՆԻ, ոչ թէ բառին բառացի իմաստով, այլ՝ փաստացի: Այդ պիտի իրականանայ երբ գործնականօրէն աւելի տեսանելի համազգային ջանք մը ըլլայ «Նոր Զայաստան»-ին օգնելու: Ժամանակի գնացքը արագօրէն կ'ընթանայ ու պէտք է չուշանալ:

Հոս, «Նոր Զայաստան»-ը կրնայ ու պէ՛տք է օգնէ տասը միլիոննոց Զայաստանի տեսլականի իրագործման, համահայկական խորհրդրդակցական մարմին մը ստեղծելով, որ եթէ յաջող ըլլայ՝ կրնայ ապագային նաեւ որոշ իրաւական ուժ ունենալ:

Փաշինեան. Ինչ կը վերաբերի Փաշինեանին, հակառակ անոր, որ ինչպէս նախապէս նշեցի, յեղափոխութեան օրերուն խանդավառուած՝ յատուկ ճամբորդած էի Զայաստան, բայց պէտք է խոստովանիմ որ այդ ժամանակ ու ետքը որոշ մտահոգութիւն ունեի՝ Փաշինեան որքանո՞վ ազգային է: Այս մտահոգութիւնը առաւելաբար կու գար անոր օգտագործած լեզուէն, որ իր էութեամբ հեռու է աւելի ազգային ուղղուածութիւն ունեցող Սփիւռքահայերու օգտագործած հայերէնէն: Բայց նաեւ պէտք է խոստովանիմ, որ այդ կասկածները արագօրէն փարատեցան տեսնելով Փաշինեանի ու «Նոր Զայաստան»-ի՝ Արցախեան հարցին նկատմամբ որդեգրած ինքնավստահ ու յստակ, հպարտ քաղաքականութիւնը:

Աւանդական արժէքներ. Ուրիշ կարեւոր ոլորտ մը, որուն դեռ պէտք է ապասել վերջնական եզրակացութեան մը յանգելու համար, ընկերաբարոյական հարցերն են: Այս ոլորտը իր տարբեր ճիւղաւորումներով բարդ է ու կնճռոտ, որովհետեւ կապ ունի ո՛չ թէ միայն ներքին, այլեւ արտաքին ազդակներու հետ: Եւրոպայի հետ մերձեցումը ու որոշ չափով անկէ կախեալ ըլլալու հանգամանքը կրնայ դուռ բանալ Զայաստանի վրայ ճնշումներու, որպէսզի վերջինս մեր ազգային բարոյական համակարգին հակառակ ընթացք մը որդեգրէ, պաշտպանելով ու օրիկանացնելով Եւրոպային յատուկ ծայրայեղ ազատամիտ երեւոյթները: Այս մտահոգութիւնը աւելի կը զօրանայ նկատի առնելով «Նոր Զայաստան»-ի ստեղծած Նոր իրավիճակին մէջ հայ ծայրայեղ ազատամիտ անհատներուն ու հոսանքներուն աշխուժացումը: Յամենայն դէպս, առ այժմ նշանները լաւ կ'երեւին, որովհետեւ դեռ փաստացիօրէն ծայրայեղ ազատամիտ մղումներու պաշտօնական ու օրէնսդրական կիրառման փորձ չ'երեւիր: Անցեալ տարուան Դեկտեմբերին կայանալիք սեռային փոքրամասնութիւններուն փակ ֆորումը այդպէս ալ տեղի չունեցաւ, հակառակ իրաւապաշտպաններուն բողոքներուն: Ոստիկանապետ Օսիբեանը այդ մէկը ապահովութեան ազդակներով պատճառաբանեց: Հոս անպայման պէտք է ուշադրութիւն հրաւիրել այն հանգամանքին վրայ, որ նման հաւաքներ տեղի ունեցած էին նախորդ վարչակարգի ժամանակ, որոնց մասին աղմուկ չէր բարձրացուած:

Վերջերս Ազգային Ժողովի դահլիճին մէջ, մարդու իրաւունքներու յանձնախումբի նիստին ժամանակ սեռափոխի մը ելոյթ ունենալը շիկացուց մթնոլորտը: Այլ բան կարելի չէր կռահել, նկատի առնելով որ Զայաստանի Ժողովուրդին ջախջախիչ մեծամասնութիւնը դեմ է հանրային նման դրսեւորումներու: Յատկանշական է Արտաքին գործոց նախարարութեան բանբերին պատասխանը Զայաստանի մէջ որոշ դեսպանատուներու՝ այդ դէպքին մասին միակողմանի յայտարարութեան. «Ուստի, այս համատեքստում մեր միջազգային գործընկերները պէտք է առաւել յարգանք եւ զգայնութիւն ցուցաբերեն հայկական հասարակութեան հանդէպ եւ ձեռնպահ մնան հասարակական քննարկումների անհարկի ուղղորդումից, եթէ անգամ նրանք համաձայն չեն դրանց տոնայնութեան հետ: Կ'ուզենայինք յիշեցնել, որ հասարակական



բարոյականութեան սկզբունքը մաս է կազմում մարդու իրաւունքների միջազգային պարտաւորութիւններին եւ դրանք չեն կարող անտեսուել»:

Յոս կարելոր հանգամանք է Փաշինեանի ընտանիքին ամուր ու աւանդական ըլլալու հանգամանքը, բան մը, որ Փաշինեան կը շեշտադրէ ու կը յայտարարէ ըսելով, որ ինք աւանդական հայկական ընտանիքի հետեւորդ է: Նաեւ ոչ-պակաս կարելոր է Փաշինեանի հաւատացեալ ըլլալու հանգամանքը, որ դարձեալ զանազան առիթներով նշած է: Յայտնի է անոր խօսքը. «Կայ մի գիրք որ անընդհատ ընթերցում եմ, այդ գիրքը Աստուածաշունչն է»:

Յոս, փակագիծ մը բանալով պետք է նշել Փաշինեանի տիկնոջ՝ Աննա Յակոբեանի գործած դրական տպաւորութեան եւ ունեցած դերին մասին, բաներ որոնք կարելոր են ու մեծապէս կրնան նպաստել «Նոր Հայաստան»-ին ու անոր հեղինակութեան բարձրացման:

Յամենայն դէպս, այս հարցին մէջ վերջնական եզրակացութեան յանգելու համար դեռ պետք է սպասել ու նայիլ, թէ եկող տարիներուն «Նոր Հայաստան»-ը որքանով պիտի կրնայ հաւասարակշռել Արեւմուտքի ու մանաւանդ Եւրոպայի հետ իր զարգացող համագործակցութիւնը, քրիստոնէութենէն եկող մեր աւանդական ու ազգայնացած բարոյական արժէքներուն պահպանման հետ:

Եկեղեցի. Խօսելով քրիստոնէութեան մասին անկարելի է շրջանցել Փաշինեանի դիրքը Մայր Եկեղեցւոր նկատմամբ, երբ յստակօրէն ան կը խօսի Պետութեան՝ Եկեղեցւոյ ներքին գործերուն չխառնուելուն մասին: Եթէ Փաշինեան եւ «Նոր Հայաստան» հաստատակամ մնան յայտարարուածին վրայ, այս մէկը կատարելապէս նոր իրավիճակ մը պիտի ստեղծէ Մայր Եկեղեցւոյ համար, որ իր կարգին պիտի պահանջէ Եկեղեցւոյ հոգեւորական ու աշխարհական զաւակներուն լուրջ միացեալ ջանքերը նոր իրավիճակին համապատասխան ճիշդ լուծումներ գտնելու համար:

Դարձեալ Փաշինեանի մասին. Շարունակելով խօսիլ Փաշինեանի մասին՝ պետք է ըսել, որ նկատելի է պետական բարձր մակարդակի վրայ անոր անփորձութիւնը, ինչ որ հասկնալի է: Այսպէս, «Նոր Հայաստան»-ի առաջին սխալներէն մէկը եղաւ Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) ընդհանուր քարտուղար Եւրի Խաչատուրովի նկատմամբ Մարտ 1-ի հարցով քրեական գործի յարուցումը, նախքան ենթակային այդ պաշտօնէն հեռացումը: Այս սխալը այնուհետեւ ուղղուեցաւ: Նման ուրիշ սխալներ ալ եղան: Երբեմն նկատելի է Փաշինեանի մէջ ցիղերուն չտիրապետելու հանգամանքը, որ պատճառ կը դառնայ պետական նման մակարդակի վրայ գտնուող անձին անյարիր արտայայտութիւններու: Այսպէս, նոյն ՀԱՊԿ-ի ընդհ. քարտուղարի յաջորդի ընտրութեան շուրջ բանավեճի սկզբնական շրջանին՝ Փաշինեան ներքաշուեցաւ անպատշաճ բանավեճի մը մէջ Պելառուսի նախագահ Լուքաշենքոյի հետ: Այդ մէկը շուտով վերջ գտաւ երբ Փաշինեան հրապարակայնօրէն դադրեցաւ պատասխանել Լուքաշենքոյի սադրանքներուն: Խաչատուրովի յաջորդին նշանակման հարցին մէջ, Հայաստան յանձին Փաշինեանի՝ ցուցաբերեց հաստատակամութիւն ու չզիջեցաւ Լուքաշենքոյին: Արդիւնքը այն եղաւ, որ չնայած՝ Հայաստան կորսնցուց ՀԱՊԿ-ի ընդհ. քարտուղարութիւնը, բայց Պելառուսն ալ ձեռք չձգեց այդ մէկը: Չմոռնանք յիշեցնել, որ թէ՛ Պելառուսը, թէ՛ Ղազախստանը 2016-ին Ապրիլեան պատերազմի ժամանակ պաշտօնապէս



աջակցած էին Ազերայանճանին, բան մը որ անընդունելի է ռազմավարական նոյն դաշինքի անդամ երկիրներու միջեւ: Այս հարցը լաւ հասկնալու համար, պէտք է լաւ ճանչնալ ՀԱՊԿ-ի անդամ երկիրներու ղեկավարները, որոնք խորհրդային շրջանէն եկած միապետական եւ փճացած համակարգերու ղեկավարներ են: Ասոնց մէջ Փաշինեան տարբեր կ'երեւի ու նշանակալից է, որ առաջին օրէն «Նոր Հայաստան»-ը ցոյց տուաւ,– թէկուզ սկիզբը սխալ ձեւով իսկ ետքը՝ ճիշդ,– որ այլեւս այդ ղեկավարները Հայաստանին վերէն չեն կրնար նայիլ, որ այլեւս իրենց դիմացը յանձին Փաշինեանի՝ Նոր, հպարտ ու յանդուգն ղեկավար մը կայ, որուն հետ պէտք է հաշուի նստին: Հետաքրքրական է նշել, որ ՀԱՊԿ-ի ներքին այս գործերուն մէջ «Նոր Հայաստան»-ի այս անկախ ընթացքը Ռուսաստանի շահերուն կը համապատասխանէ, որովհետեւ անցեալին Պելառոսը եւ Ղազախստանը սովորութիւն ըրած էին մարտահրաւեր նետելու Ռուսաստանին, իսկ «Նոր Հայաստան»-ի նոր ընթացքով Ռուսաստան ՀԱՊԿ-ի մէջ իրեն համակարծիք անդամ մը ունեցաւ:

ՀԱՊԿ-ի հետ կապուած վերը նշուած օրինակը ցոյց կու տայ, որ Փաշինեան ատակ է սորվելու ու զարգանալու, բան մը որ ռեւէ մարդու ու մա՛նաւանդ ռեւէ ղեկավարի համար ամենէն կարեւոր ու անհրաժեշտ յատկանիշերէն մէկն է: Ասոր ուրիշ մէկ հաստատումը ունեցանք վերջերս, երբ Ազգային ժողովին մէջ Փաշինեանի՝ տեղեկագիր կարդալու ու հարցումներու պատասխանելու համբերատար ու զուսպ ձեւը դրական գնահատուեցաւ «Լուսաւոր Հայաստան»-ի երեսփոխանի մը կողմէ, համեմատած՝ հարցում-պատասխանի նուիրուած նախորդող նիստին, ուր վարչապետը ցուցաբերած էր անհամբերութիւն ու որոշ ջղագրգռութիւն: Եզրակացնելով՝ այնպէս կը թուի, որ Փաշինեան ինչպէս Արեւմտահայերս պիտի ըսէինք՝ տամար ունի, իսկ Արեւելահայերը պիտի ըսէին՝ «կող ունի»: Փաշինեանի կողմէ մտածուած ու պատշաճ օգտագործման պարագային՝ այդ տամարը կրնայ դառնալ դրական գործօն, բան մը որ ինչպէս կ'երեւի՝ արդէն տեղի կ'ունենայ:

Այս յօդուածի գրութեան ընթացքին վկան եղանք Փաշինեանի տամարին, այս անգամ Հայաստանցիներու նկատմամբ, երբ ան նուաստացուց ու պաշտօնազրկեց մաքսատան աշխատողները, չափազանցուած կերպով հակազդելով տեղավայրին աղտոտ պահուած, իսկ Հայաստանի դրօշին՝ սենեակին մէկ անկիւնը դրուած ըլլալուն: Յուսամ, որ վարչապետը ինչպէս սորվեցաւ իր ջիղերուն տիրապետել պաշտօնական դաշտին մէջ, նոյնպէս ալ պիտի սորվի նոյնը ընել ամենուրեք:

Վտանգ. Վհա նկատի ունենալով բոլոր այս տուեալները, այնպէս կը թուի, թէ «Նոր Հայաստան»-ը պիտի յաջողի նաեւ գլուխ հանել տնտեսական յեղափոխութիւնը ու հաւանաբար պիտի սկսինք արդիւնքները տեսնել յառաջիկայ տարիներուն: Լուրջ հիմքեր կան լաւատես ըլլալու: Իմ կարծիքով երկու հանգամանքներ կրնան խանգարել «Նոր Հայաստան»-ը.

1 - Հայաստանին մերձ տարածաշրջանին մէջ կայունութեան խախտումը. հասկնալի է, որ խօսքը առաջին հերթին Իրանի շուրջ պատերազմի մը մասին է, որ ներկայիս ակելի քիչ հաւանական է քան նախորդ տարիներուն, որովհետեւ եթէ նման հաւանականութիւն մը ըլլար՝ արդէն տեղի ունեցած պիտի ըլլար: Իրանը տկարացնելու ներկայի միջոցը տնտեսականն է, բայց կատարելապէս չէ վերացած պատերազմի մը հաւանականութիւնն ալ:



2 – Փաշինեանի հեռանալը, որ ինքնիրեն գործող համակարգի բացակայութեան պատճառով կրնայ անբուժելի հարուած հասցնել «Նոր Հայաստան»-ին: Այս պատճառով գերկարելոր է անոր ապահովութիւնը:

Եզրակացութիւն. Փաշինեանի եւ «Նոր Հայաստան»-ի ամբողջ գործունեութեան հիմքը կը հանդիսանան այս երկու հասկացութիւնները. հպարտը եւ տուխովը: Հպարտութիւնը Եւրօթիւնն է, որ կ'արտայայտուի ու կ'իրագործուի տուխով՝ այսինքն յանդգնութեամբ: Այս երկու հասկացութիւնները մարդուն գիտակցութեան ո՞ր մասին հետ կապ ունին եթէ ոչ՝ հոգւոյն: Ամենէն Եականը հոգիի հարցն է, ազգի՞ն հոգիին, այդ հոգիին առո՞ղջ ըլլալու հարցը: Ու փաշինեանական հպարտ ու յանդուգն (տուխով) հասկացութիւններն են որոնք առանցքը պիտի եւ պէ՛տք է կազմեն ոչ միայն Հայաստանի, այլ՝ Նաեւ համայն Հայութեան կեանքին: Հոգի՞ն է ամենէն կարելորը, հոգին՝ որ մարդը կը մաքրէ ու կը բարձրացնէ, հոգին՝ որ մարդը իր «ես»-էն վեր կը հանէ, հոգին՝ որ մարդը հերոս կը դարձնէ, հոգին՝ որ սովորական Հայը կը դարձնէ Արամ Մանուկեան եւ Գարեգին Նժդեհ: Մենք պարտաւոր ենք,– եթէ կ'ուզենք լուծել մեր ազգային ճակատագրական հարցերը,– բարձրանալու ներկայի մեր միջակութեան, երբեմն Նոյնիսկ անկումային վիճակէն ու դառնալու բարձր հոգիով ազգ, հպարտ ու յանդուգն ազգ: Ահա միայն այս պարագային է, որ պիտի կարենանք արժանի դերակատարները դառնալ պատմական այս պահին ու բարձրացնել մեր ազգի որակը, պահելով անցեալէն եկած ու քրիստոնէութեան վրայ հիմնուած մեր բարոյական արժէքները, մեր հերոսական հոգին եւ փառապանծ մեր մշակոյթը, միեւնոյն ժամանակ դառնալով միջազգային ազգ, դուրս գալով գէշ իմաստով արեւելեան ու նեղմիտ մտայնութենէն ու հիմնելով ժամանակակից հասկացողութեամբ ընկերութիւն ու պետութիւն, պետութիւն մը՝ որ խթան պիտի հանդիսանայ զանգուածային հայրենադաճութեան, պետութիւն մը՝ որ ատակ պիտի ըլլայ լուծելու մեր պատմական հարցերը: ՄԻՋԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԵԾ ՀԱՐՑԵՐԸ ՉԵՆ ԼՈՒԾՈՒԻՐ, ՄԵԾ ՀԱՐՑԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ Է ՊԵՏԶ: Ահա եթէ ճիշդ ըմբռնենք՝ «Նոր Հայաստան»-ն է, որ կրնայ տալ այդ կարելիութիւնը: Անհրաժեշտ է, որ ներկայիս ստեղծուած հպարտութեան ու յանդգնութեան մթնոլորտը ծաւալի, որպէսզի առաջնորդէ հայկական հրաշքի իրագործման, մեզի տրուած յատուկ կարողութիւնները դուռ բանան հայկական հանճարի Նոր ժայթքումին, որ մեկզմէկուն սերտօրէն կապող ժամանակակից աշխարհին մէջ արագօրէն կրնայ բիւրեղանալ ու հաստատուիլ: Առանց յիշելու պատմական հին շրջանը, վերջին դարերուն մենք նման ժամանակաշրջաններ ունեցած ենք. օրինակ՝ Արեւմտահայութեան ապրած վերելքը 1908-1915 ժամանակշրջանին, Խորհրդային Հայաստանի, այսինքն Արեւելահայութեան ապրած վերելքը 1950-ականներէն մինչեւ 1980-ականները: Երկու շրջաններն ալ տեղի ունեցած ըլլալով ոչ-անկախ պետութեան մէջ, կա՛մ կարճ, կա՛մ ալ իրենց ձգած ազդեցութեամբ սահմանափակ եղած են: Նման վերելք մը եթէ տեղի ունենայ եկող տարիներուն հայկական ազատ ու անկախ պետութեան մէջ, շատ աւելի հուժկու ու ծաւալային պիտի ըլլայ եւ պիտի ունենայ համաշխարհային հնչեղութիւն:

Միւս կողմէն, Փաշինեանին եւ Նոր կառավարութեան համար ամենամեծ քննութիւնը պիտի ըլլայ յաջորդ ընտրութիւններուն թափանցիկ ու արդար անցկացումը եւ հպարտութեան պարագային՝ խաղաղօրէն իշխանութեան փոխանցումը: Այն օրը երբ այդ տեղի ունենայ, այսինքն Հայաստան սկսի ազատ ու արդար ընտրութիւններով իշխանութեան խաղաղ փոխանցում կատարել:



սորվիլ, պիտի կրնանք տօնել Հայաստանի մէջ ժողովրդավարութեան վերջնական հաստատումը: Ահա միայն այս պարագային է, որ կարելի պիտի ըլլայ վերջնական կարծիք կազմել Փաշինեանի մասին ու հաստատել յեղափոխութեան վերջնական յաղթանակը:

Բայց այս բոլորէն վեր ու անդին, լաւ հասկնանք ժամանակին նշանները, լաւ հասկնանք պատմական պահին ընձեռած կարելիութիւնը, լաւ հասկնանք այն լուրջ պատասխանատուութիւնը, զոր ունինք այսօր, մեր բովանդակ ուժերով մասնակցինք «Նոր Հայաստան»-ի կերտման, «Նոր Հայաստան»-ը դարձնենք ՏԱՍԸ ՄԻԼԻՈՆՆՈՑ ՀԱՅԱՍՏԱՆ ու այդ մէկը ընենք հպարտութեամբ ու յանդգնութեամբ, այդ մէկը ընենք տուխով:

Շնորհաւոր ըլլայ «Նոր Հայաստան»-ի առաջին տարեդարձը:

Պ.Բ.Շ.

Սկրինկֆիլտ, Մասաչուսեց

Աղբիւր՝ ՆՈՐ ՅԱՌԱՋ

Տեսակէտ

ԻՆՉՊԷՍ ԱՆԲԱՐՈՅ ԱՐԵՒՄՈՒՏՔԸ ԴԱՐՁԱՒ՝ ՏԻՊԱՐԸ ԲԱՐՈՅՍԱԿԱՆԻՆ



Այս հարցումը դնողը եւ անոր պատասխանողը արեւելքի մը չէ, ոչ ալ՝ Արեւմտքի դրամատիրութեան հակառակորդ յեղափոխական մը, եւ ոչ իսկ՝ դրամատիրական ներկայ հասարակարգը արդիական ստրկատիրական հասարակարգ անուանող Ֆրանչիսկոս Ա. Պապը, այլ՝ 100 տոկոս արեւմտքի եւ դրամատիրութեան ծառայող ու ԱՄՆ-ի պետական բարձր պաշտօնատար մը՝ Դոկտ. Փոլ Քրեյկ Ռոպըրթս (Dr. Paul Craig

Roberts) անուն, որ Նախագահ Ռիկընի օրով, տնտեսական քաղաքականութեան մշակման գծով՝ ԱՄՆ-ի Պետական Գանձի քարտուղարի օգնականն էր, որուն այդ պաշտօնէն բացակայութեան պատճառով, Միացեալ Նահանգներու տնտեսութիւնը այսօր (2008 թ.) կը գտնուի իր պատմութեան ամենէն ձախող յանձանձումին մէջ... (Այս գնահատականը մասնագէտներու կողմէ տրուած է Դոկտ. Ռոպըրթսին, 2008 թուին, Դրամատիրութեան մեծ ճգնաժամին սկիզբը):

Տակաւին, վերի խորագիրը մեղմացուած տարբերակն է Դոկտ. Ռոպըրթսի հարցադրումի բնագրին, որ բառացիօրէն կ'ըսէ. ««ԲԻՐՏ ԱՇԽԱՐՀԸ»՝ Արեւմտեան քաղաքակրթութիւնը ի՞նչպէս կրցաւ ձեռք բերել «բարոյական խղճմտանք»ի մենաշնորհի մը, երբ ան չունի բարոյական» (Դոկտ. Փոլ կ'ըսէ՝ թէ Արեւմտքի քաղաքակրթութեան կողմնակիցները, անոր բոլոր հակառակորդները, աշխարհի մէջ «Բիրտ Աշխարհ»ի մարդիկ կը կոչեն):

Դոկտ. Փոլ Քրեյկ Ռոպըրթս, իր այս գրութիւնը տուած է «Տեղեկատուութեան Պարզաբանութեան Տուն» (ՏՊՏ – ICH, Information Clearing House) կայքէջին, եւ լոյս տեսած է 24 Յունուար 2008 թուականի թողարկումին մէջ (<http://www.informationclearinghouse.info/article19142.htm>):

Արեւմտքի քաղաքակրթութեան (Դրամատիրութեան) անբարոյականութիւնը խարանիչ ոճով փաստելու համար, Դոկտ. Ռոպըրթս Նախ կը մեջբերէ Արեւմտքէն հինգ զինուորական առաջնորդներու մէկ պնդումը, որ կ'ըսէ. «Չանգուածային բնաջնջումի զէնքերուն գործածութիւնը կանխարգիլելու համար, ամենէն ազդու միջոցը կորիզային զէնքի առաջին գործածութեան դէպքին պահպանութիւնն է որպէս ազդարարութիւն»:



Ան կ'ըսէ թէ՛ երեք անգամ կարդացած է այս նախադասութիւնը, հասկնալու համար ասոր ըսել ուզածը եւ հասկցած է, թէ՛ կորիզային զենքի գործածութիւնը կանխարգիլելու համար, ԱՄՆ-ի կողմէ՛ Զիրոշիմայի եւ Նաբազաքիի վրայ կատարածին յիշատակին նախընթացին պահպանումով (այդ զենքին առաջին գործածողը ըլլալով), ազդու կերպով կանխարգիլուած կ'ըլլայ այդ զենքին գործածութիւնը ուրիշներու կողմէ...: Ուրեմն, միայն Արեւմուտքին արտօնուած է կորիզային զենքով ուրիշ ժողովուրդներ ջարդել, որպէսզի ուրիշներ չգործածեն այդ զենքը: Ո՞ր է բարոյականը այս նախադասութեան մէջ, հարց կու տայ ան: Եւ կը բացատրէ թէ՛ այս նախադասութիւնը մէջբերուած է այն տեղեկագրէն, զոր Արեւմուտքի հինգ զինուորական առաջնորդները (ամերիկացի մը, գերմանացի մը, հոլանտացի մը, ֆրանսացի մը եւ բրիտանացի մը) ներկայացուցած են ՕԹԱՆ-ի 2008 թուի Ապրիլի գագաթաժողովին (այս տեղեկագիրը կարելի է գտնել www.guardian.co.uk կայքէջի վրայ): Եւ կ'աւելցնէ՝ չկարծէք թէ այս զինուորական առաջնորդները ախտավարակ յիմարանցի մը փախստականներ են, այլ՝ ականաւոր հրամանատարներ, եւ անոնք կ'ըսեն թէ՛ Արեւմուտքի արժեհամակարգը եւ ապրելակերպը վտանգուած են, բայց Արեւմուտքը վճռած է պաշտպանել զանոնք, սակայն ՄԱԿ-ը եւ Եւրոմիութիւնը կը տկարացնեն ՕԹԱՆ-ը, որուն հաւաստիութիւնը վտանգուած է Աֆղանիստանի մէջ: Եւ եթէ ՕԹԱՆ-ը չյաղթէ Աֆղանիստանի մէջ, արեւմտեան քաղաքակրթութիւնը պիտի տապալի այնպէս՝ ինչպէս տապալեցաւ Սովետ Միութիւնը: Արեւմուտքը դեռեւս չանդրադառնար, թէ՛ որքա՛ն տկարացած է եւ թէ զօրանալու համար, ան դեռեւս կարիքը ունի արձակելու շատ անելի մեծ թիւով եւ շատ անելի մեծ չափի ռումբեր... (Դոկտ. Ռոպրորթի դրամատիրութեան տուած ամենամեղմ «անբարոյական» բնութագրումին յաջորդեց Վատիկանի Պապին բնութագրումը՝ «արդի ստրկատիրութիւն»... իսկ 170 տարիներ առաջ, Ք. Մարքս զայն բնութագրած էր՝ «բարբարոսութիւն», երբ գրած էր «Մարդկութիւնը այսօր կոչուած է ընտրելու՝ բարբարոսութեան եւ քաղաքակրթութեան միջեւ... դրամատիրութեան եւ սոցիալիզմի միջեւ»):

Դոկտ. Ռոպրորթս կը գրէ թէ՛ տեղեկագրին մէջ, գերմանացի զինուորական առաջնորդը կը քննադատէ Գերմանիոյ (Մերքելի գլխաւորած) կառավարութիւնը, քանի որ ան արգելք կ'ըլլայ գերմանական միլիթարիզմի (զինուորապաշտութեան) վերադարձին, ինչ որ Արեւմուտքը անկարող կը դարձնէ պաշտպանելու իր արժեհամակարգն ու ապրելակերպը, եւ կը կրճատէ գերմանական զինուժը Աֆղանիստանի մէջ: (Դոկտ. Ռոպրորթս ափսոսանքով դիտել կու տայ թէ այս գերմանացի զինուորական հրամանատարը՝ իրօք փախստական մըն է վտանգաւոր խելագարներու յիմարանցէ... երբ գերմանական միլիթարիզմին վերադարձը կը պահանջէ, մինչդեռ Բ. Աշխարհամարտը մղուած էր այդ միլիթարիզմին դէմ՝ աներելով աշխարհն ու Գերմանիան, եւ տասնեակ միլիոններ սպաննելով, որոնց շարքին՝ միլիոնաւոր գերմանացիներ...):

Դոկտ. Ռոպրորթս նոյն ափսոսանքով կը գրէ թէ՛ այս տեղեկագիրը ողջունած է դարձեալ գերմանացի ռազմապաշտ պետական պաշտօնակատար մը՝ Ռոն Ասմոս անուն, այս տեղեկագիրը նկատելով «Չարթնելու Կոչ Մը» դժբախտաբար՝ «Բիրտ Աշխարհ»ի սպառնալիքներուն հանդէպ, փոխանակ զարթնելու կոչ մը ուղղելով՝ Արեւմուտքի առաջնորդներուն, զարթնելու իրենց խելագարութենէն...:

Բայց թէ ովքեր կամ ինչ բաներ կը սպառնան Արեւմտեան արժեհամակարգին եւ ապրելակերպին, անոնք կ'ըսեն՝ քաղաքական մոլեռանդութիւնը, կրօնական աւանդապաշտութիւնը եւ կորիզային զենքերու վերահաս տարածումը: Այս է պատասխանը յիմարանցի հինգ փախստականներուն...:



Եւ հարց կու տայ թէ՛ քաղաքական մոլեռանդութիւն ըսելով որո՞նց կ'ակնարկեն այս հիւսկը. արդէ՞ ք նախագահ Պուլշի գլխաւորած Նոր-Պահպանողականներուն (the neo-conservatives), որոնք կը հաւատան թէ՛ մարդկութեան ապագան կախեալ է Միացեալ Նահանգներու միահեծան իշխանութեան համայն աշխարհի վրայ հաստատումէն...: Կրօնական աւանդապահութիւն ըսելով, արդէ՞ ք կ'ակնարկեն Արմակետտոնի զօրակոչ ընող «աւետարանականներո՞ւն», կամ՝ քրիստոնեայ եւ իսրայելացի սիոնականներո՞ւն, որոնք հիւլեական յարձակում մը կը պահանջեն Իրանի վրայ (ի դէպ՝ նախապէս ալ, հայ սիոնականներ, ԱՄՆ-էն կը պահանջէին հիւլեական ռմբակոծում մը Սովետ Միութեան վրայ... որուն մաս կը կազմէր Արեւելահայաստանը): Իսկ կորիզային զէնքերու տարածում ըսելով, արդէ՞ ք կ'ակնարկեն Իսրայելի չիրապարակուած եւ ապօրինի կերպով ձեռք բերուած մի քանի հարիւր կորիզային զէնքերուն...:

Ո՛չ, կ'ըսէ Դոկտ. Ռոպըրթս, եւ կը շարունակէ թէ՛ այս խելագարած փարանոյաքները՝ քաղաքական ու կրօնական ամէն մոլեռանդութիւն եւ մարդկութեան սպառնացող վտանգները կը գտնեն Արեւմտեան Քաղաքակրթութենէն (ներառեալ Իսրայելէն) ԴՈՒՐՍԸ՝ «տակաւ բիրտ դարձող աշխարհի»ին մէջ...: Իսլամները մոլեռանդ են... բոլոր սպիտակ «տղաք»ը բանական են եւ առողջ մտքով...:

Եւ՝ քմծիծաղով կը շարունակէ հինգերուն զառանցանքը թէ՛ ոչ մէկ բրտութիւն կայ ԱՄՆ-ՕԹԱՆ-ի ռմբակոծումներուն մէջ՝ Սերպիոյ, Իրաքի եւ Աֆղանիստանի վրայ, կամ Իսրայելի ռմբակոծումներուն՝ Լիբանանի վրայ, կամ Իսրայելի Էթնիկ մաքրագործումին՝ Արեւմտեան Ափին մէջ, կամ՝ Կազայի պաղեստինցիներու ցեղասպանութեան մէջ...: Այս ամէնը, Նոյնպէս՝ Ամերիկայի ռմբակոծումները Սոմալիոյ վրայ, Ամերիկայի գործած խենէշ չարչարանքները՝ գաղտնի զնտաններուն մէջ, ցուցադրական դատաւարութիւններու անթիւ ձեռքաւարտութիւններու, ընտրեալ կառավարութիւններու տապալումը եւ անոնց տեղ մանկլաւիկ կառավարիչներ հաստատելու միջամտութիւնները՝ բրտութիւն չեն, այլ՝ «Բիրտ Աշխարհ»ը հնազանդ պահելու համար Արեւմուտքի անհրաժեշտ հակադարձութիւններն են...: Բրտութիւնները կը կատարուին բացառապէս «Բիրտ Աշխարհ»ին մէջ, եւ միմիայն անոր մեղքով: Այս բրտութիւններէն ոչ մէկը պիտի պատահէին, եթէ՛ «Բիրտ Աշխարհ»ի բնակիչները կատարէին միայն այն արարքները, որոնք պահանջուած են իրենցմէ կատարել...: Քաղաքակրթ աշխարհը, որ բարոյականութեան մենաշնորհը ունի, ինչպէս կրնար արտօնել «Բիրտ Աշխարհ»ի մարդոց վարուիլ անկախօրէն... մեղա՛յ Աստուծոյ, անոնք կրնային յարձակիլ անմեղ երկրի մը վրայ...: «Բիրտ Աշխարհ»ը կը բաղկանայ անբարոյ մոլեռանդներէ, որոնք կը մերժեն Արեւմուտքին կողմէ լուսանցբայնացուիլ, եւ՝ իրենց վրայ օդային զանգուածային հազարաւոր ռմբակոծումներուն իրենց հասցուած մահուան եւ աւերումին կը պատասխանեն անձնասպանական ռումբերով...:

Եւ, աւելի կծու հեգնանքով կը շարունակէ՝ Արեւմուտքի այս զինուորական առաջնորդները, երբ տեսան որ Արեւմուտքը իր աւանդական զէնքերով չկրցաւ իր կամքը պարտադրել իր ներխուժած երկիրներուն, ներկայիս, պատրաստ են՝ համախոհաբար բարոյական աշխարհի կամքին հետ, բնաջնջելու այս ընդդիմացող ժողովուրդները: Կը հասկնա՞ք՝ Արեւմուտքը, ունեցած ըլլալով մենաշնորհը՝ բարոյականութեան, ճշմարտութեան եւ արդարութեան: Միւս արտաքին աշխարհի մարդիկը, ուրեմն, ակներեւօրէն չարեր են, նենգամիտ ու բիրտ: Յետեւաբար, նախագահ Պուլշ մեզի կը թելադրէ կատարել շատ պարզ ընտրութիւն մը՝ Բարիին ու Չարին միջեւ... եւ կը պարզուի որ բնաջնջուելու ամէնէն լաւ թեկնածուն Չարն է...: Որքան շուտ մենք կարենանք ձեռքազատուիլ «Բիրտ Աշխարհ»էն, այնքան կանուխ մենք պիտի ունենանք ազատութիւն եւ դեմոկրատիա՝ ամենուրեք, այդ «Բիրտ Աշխարհ»էն դուրս:



Մինչ այդ, Միացեալ Նահանգները՝ աշխարհի բարոյական մեծ լոյսը, նորերս ՄԱԿ-ին արգելք եղաւ, որ կարենայ վերահսկել աշխարհի բարոյական միւս մեծ լոյսին՝ Իսրայելի այն գործողութեան վրայ, որուն միջոցով Իսրայել պիտի արգիլէ դէպի Կազա առաքումները՝ ուստեստեղէնի, դեղորայքի եւ ելեկտրոմի: Կը հասկնա՞ք՝ Կազա կը գտնուի արտաքին «Բիրտ Աշխարհ»ին մէջ, եւ ուրեմն՝ որջն է Չար «տողոց»... (Իսրայելի այս արարքները ոչ միայն անբարոյական են, այլեւ՝ «պատերազմի ոճիր»ներ են Միջազգային Հանրային Իրաւունքին մէջ, որոնք արգիլուած են Նոյնիսկ բաց պատերազմի մէջ գտնուող երկու պետութեանց բանակներուն...): Մանաւանդ անոր համար, որ այդտեղի նենգամիտ պաղեստինցիները խաբեցին Միացեալ Նահանգները, երբ ԱՄՆ-ը արտօսեց անոնց՝ ազատ ընտրութիւններ կատարել: Փոխանակ ընտրելու ԱՄՆ-ի թեկնածուն, նենգամիտ քուէարկողները ընտրեցին զիրենք ներկայացնող կառավարութիւն մը....: Եւ հիմա սովամահ ըլլալու դատապարտուած են՝ մինչեւ որ անոնք ընտրեն ԱՄՆ-ի եւ Իսրայելի առաջադրած կառավարութիւնը: Բայց ինչպէ՞ս կրնանք մենք «Բիրտ Աշխարհ»ի մարդոցմէ ակնկալել, որ անոնք գիտնան թէ ո՞րն է իրենց համար լաւագոյնը...:

ՄԱԿ-ի փորձը՝ կասեցնելու Իսրայելի արդար պատժամիջոցը կազացիներուն դէմ, ցոյց կու տայ հինգ զինուորական առաջնորդներու տեղեկագրի այն հաստատումին ճշմարտութիւնը թէ՛ ՄԱԿ-ը սպառնալիք մըն է Արեւմուտքի արժեհամակարգին եւ ապրելակերպին: Իրօք, ՄԱԿ-ը մեզի դէմ է: (Հոս, ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովն է՝ յիմարանոցէն փախստական զինուորական առաջնորդներուն նկատի ունեցած թշնամին: ՄԱԿ-ը ունի որոշում կայացնող երկու կառոյց՝ Ապահովութեան Խորհուրդը եւ Ընդհանուր Ժողովը: Ընդհանուր Ժողովի որոշումները կը տրուին ձայներու մեծամասնութեամբ: Ուրեմն, անելի դեմոկրատական է քան Ապահովութեան Խորհուրդը, որ հակա-դեմոկրատական է եւ խտրական՝ մնայուն հինգ անդամներուն տալով վերջի իրաւունք: Ուրեմն ճիշդ է թէ՛ բարոյական տեսակետէն, ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովը դէմ է Արեւմուտքի բռնատիրութեան, եւ «Բիրտ Աշխարհ»ի մաս կը կազմէ): Այս պատճառով, ան կը գտնուի արտաքին՝ «Բիրտ Աշխարհ»ի մէջ, եւ ուրեմն՝ կը դառնայ թեկնածու բնաջնջուելու, եթէ զայն ուղղակի ահաբեկչական կազմակերպութիւն չնկատենք...: Ինչպէս մեր Նախագահը ըսաւ. «Դուն մեր հե՞տ ես, թէ՛ մեր դէմ» (Արեւմուտքի Նեօ-պահպանողականներու «վարդապետն ասաց»ը...):

Դուկտ. Ռոպըրթս կը շարունակէ, պարզելով Պաղեստինեան Դատին Էութիւնը:

ԱՄՆ եւ Իսրայել, Պաղեստինի մէջ պետք ունին խամաճիկ կառավարութեան մը, որպէսզի կեթթոյացուած Պաղեստինին մնացորդացը կարելի ըլլայ յարմարցնել «երկու պետութեան լուծում»ին: Այսինքն՝ Իսրայելի մէջ ներառել Արեւմտեան Ափն ալ, իսկ միւս պետութիւնը՝ պաղեստինցիներու կեթթօ մը՝ զուրկ տնտեսութենէ, ջուրէ եւ յարակցական սահմանագիծերէ:

Ասիկա անհրաժեշտ է պաշտպանելու համար Իսրայելը՝ արտաքին «Բիրտ Աշխարհ»էն:

«Բիրտ Աշխարհ»ի բնակիչները շփոթ գաղափար ունին «ժողովուրդներու ազատ ինքնորոշման իրաւունք»ին մասին, զոր ջատագոված են Արեւմուտքի առաջնորդները (այս իրաւունքը առաջին պաշտպանողները եղած են՝ Վլատիմիր Իլիչ Լենին եւ ԱՄՆ-ի 28-րդ Նախագահ Ուուորո Ուիլսոն՝ իր «14 կէտեր»ուն մէջ): Այս իրաւունքը տրուած չէ անոնց, որոնք կ'ապրին Արեւմուտքի քաղաքակրթութեան աշխարհէն դուրս, որոնց համար՝ Իսրայել պետք է որոշէ...: Երբ «ինքն» ըսենք, կը հասկնանք Ամերիկա, Իսրայել: Մեզի այնքան ծանօթ է «Ամերիկեան Վճռորոշում» ասոյթը, որ կը նշանակէ՝ ԱՄՆ-ը կը վճռորոշէ եւ ուրիշները կը հնազանդին:



Եւ՝ «Բիրտ Աշխարհ»ի մարդիկն են, որ կը պատճառեն բոլոր չարիքները՝ իրենց անհնազանդութեամբ (Միջազգային Հանրային Իրաւունքին մէջ, ազատ ինքնորոշման իրաւունքը erga omnes իրաւունք մըն է՝ բոլոր բոլորին պարտադիր, անկապտելի, անսակարկելի, անկասելի, անժամանցելի, անփոխանցելի եւ... նոյնիսկ՝ անհրաժարելի անոր իրաւատէրին կողմէ...):

Հոս կ'աւարտի Դոկտ. Ռոպըրթսի գրութեան բնութագրումը Արեւմուտքի սխալմամբ «քաղաքակրթութիւն» կոչուած ստրկատիրութեան՝ Ֆրանչիսկոս Ա. Պապի բնութագրումով: Այս ստրկատիրութիւնը, եթէ ըստ ձեւի, տարբեր է հնադարեան ստրկատիրական դարաշրջանէն՝ երբ հինի շղթաներուն փոխարէն կը գործածէ կորիզային նախայարձակումի սպառնալիքը, իբր արդիական ստրկատիրութիւն, սակայն ըստ էութեան, տարբեր չէ՝ քանի որ կը պահանջէ հնազանդութիւն, որ արդի ժամանակներու յատուկ եւ հնարաւոր ստրկամտութիւնն է...

Օտար պետութեան մը հնազանդ կ'ըլլայ միայն այն քաղաքացին, որ ստրկամիտ դարձած է՝ կորսնցուցած ըլլալով իր ազգային հպարտութիւնը...:

Այս ճշմարտութիւնը, 19-րդ դարու վերջերուն, բրիտանական Լորտերու Պալատի նիստերէն մէկուն մէջ բացատրած է Պալատին մէկ ծերունազարդ անդամը (որուն անունը այժմ չեմ կրնար յիշել), Պալատը համոզելու համար թէ՛ Հնդկաստանի գաղութացումը հեռանկար չունի, ապագայ չունի, քանի որ ինք՝ Հնդկաստան իր կեցութեան ընթացքին, հնդիկ թշուառ ու կիսագրագետ կօշիկի ներկարարին մօտ անգամ հաստատած է անոր ազգային հպարտութիւնը:

Ուրեմն, ամերիկեան ու սիոնական իմփերիալիստներու համաշխարհային ոստիկանապետութեան կը հնազանդին միմիայն այն երկիրները (եւ այդ երկիրներու միմիայն այն քաղաքացիները), որոնք փոքրամասնութիւն կ'ըլլան իբր կանոն, որոնք կորսնցուցած են իրենց ազգային հպարտութիւնը...: Ահա թէ ինչու Մեծն Վահան Թեքէեան եւ Մեծն Անդրանիկ Անդրեասեան յաճախ կրկնած են. «Օդի, ջուրի եւ հացի նման՝ մենք պետք ունինք ազգային հպարտութեան»...:

Եւ այդ հպարտութիւնը զգացականը չէ, կոյրը չէ, սնապարծութեանը չէ, օդայինը կամ պղպջակայինը չէ, եւ կամ՝ փթուռուցայինը չէ, այլ՝ կը հիմնուի ժողովուրդի մը անցեալի պատմութեան, նուաճումներուն, կերտած քաղաքակրթութեան ու մշակոյթին եւ՝ իր առաջնորդներուն մեծ իրագործումներուն, բարոյական, քաջագործական ու հերոսական ու հայրենասիրական վարք ու բարքին վրայ:

Եթէ մեր ժողովուրդին ներկայի եւ վաղուան առաջնորդները մօտէն կամ հեռուէն նմանին այս հինգ զինուորական առաջնորդներուն, ներկայ եւ գալիք սերունդները ազգային հպարտութիւն ունենալու հիմք չեն ունենար...: Եւ երբ կորսնցնեն այդ հպարտութիւնը, կը հնազանդին օտարազգի զօրաւորին, կ'ըլլան անոր ստրուկը...: Օտարազգի զօրաւորին հնազանդիլը, սոսկական անբարոյ ստրկամտութիւն չէ, այլ՝ հայրենադաւութեան, մահապարտութեան արժանի ոճիր: Իսկ բուն ոճրագործները՝ յոռի վարք ու բարքով առաջնորդները:

Հասարակական կեանքի մէջ գործունեութիւնը, հանրային պաշտօնատարութիւնը, սուրբ եւ նուիրական աշխատանք է: Անարժանները պետք է դուրս ելլեն այդ դաշտէն: Անարժանները պետք չէ ընտրել կամ նշանակել այդ պաշտօններուն, մեղսակից չըլլալու համար հայրենադաւներուն...:



ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

ՊԵՂՈՒԹ

24 Փետրուար 2019

Տեսակէտ

Ճանաչումին չափ եւ աւելի՝ Պահանջատիրութիւն

Գեորգ Պետիկեան



Ապրիլ 24-Է:

Իբրեւ հարազատ ժառանգորդները Յեղասպանութեան զոհ գացած ազգի մը՝ կը յիշենք այս թուականն ու իր արհաւիրքը: Որովհետեւ, ան դարձակետ եւ ուղենիշ մըն է իւրաքանչիւրիս համար: Ու այս օրերուն ե՛լ տեսանելի ե՛լ լսելի է, թէ դարձեալ մեր բոլորին շրթներուն վրայ աղօթք կայ, մեր եկեղեցիներէն ներս մոմի ու խունկի հետ նաեւ

յատուկ պատարագ կը մատուցուի, ջարդարարին եւ մեծ պետութիւններուն սովորական յուշագիրներ կը յանձնուին, հայահոծ քաղաքներու փողոցներուն մեջ ալ մեծ ու փոքր քայլարշաւներ եւ ցոյցեր կը կազմակերպուին, աշխարհի չորս կողմերէն եկած ձայներով:

Ու այս ձեւով ու ոճով «Ապրիլը» կը կազմակերպենք, կը յիշատակենք, պատշաճ ե՛լ արդար ե՛լ աւանդական:

Պատճառ.- որովհետեւ աւելի քան դար մը առաջ, ազգովին բարբարոս գոհունակութեան մը զոհը դարձած էինք: Ճակատագրային դժբախտութիւն:

Իսկ հիմա կ'ուզեմ հեռու մնալ ծեծուած խօսքերէն:

Նախ ըսեմ, որ այս օրերուն դարձեալ մեր բոլորին մտածումները սահմանուած են:

Հայ միտքը կրկին անգամ կը տառապի ազգի ցաւերով: Տաժանելի է այս զգացումը եւ սակայն կարելոր ու կենսական է: Ու յամառօրէն կը փորձենք իմաստ տալ կիսաքանդ պատմական օղակներուն:

Գիտենք, որ ներկայիս աշխարհը անհանգիստ է: Արդէն, գլխիկոր ինկած են բաւական արժեքներ, իսկ մեր կարգին կարծես տարիներէ ի վեր նոյն կարգախօսը կը ծամենք: Բայց անպայման՝ կը յիշենք.- թէ

Յեղասպանութեան հետեւանքով մեր կորուստները եղած էին ահաւոր ե՛լ հսկայական ե՛լ տարածքային, ե՛լ մշակութային, ե՛լ մարդկային ե՛լ հոգեբանական:

Ու հիմա.- Ապրիլ 24-Է, կը տեսնենք: Կ'ապրինք: Կը յիշեցնենք:

Ու այս «Ապրիլը» կը կարծեմ, որ տարբեր է իր նախկիններէն: Եւ միշտ այդպէս պետք է որ ըլլայ: Կ'ուզենք, որ տարբեր ըլլայ: Իւրաքանչիւր Ապրիլ, պետք է որ իր նախկինէն տարբերի,



որովհետեւ վերջ ի վերջոյ ունինք մեր սեփական արժանապատուութեան զգացումը եւ մանաւանդ՝ բոլորով ալ պատասխանատու ենք պատմութեան առջեւ: Անոր համար է, որ նոր յոյսեր շարուած են մարդկային կեանքի հորիզոններուն վրայ:

Նաեւ անմեղօրէն ըսեմ.-թէ

Անցեալ Մարտի կիսուն, Ալապամա Նահանգը դարձաւ Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող Միացեալ Նահանգներու 49-րդ Նահանգը: Այս մասին հայ մամուլը արագ եւ օրին արձագանգեց: Շեփորեց: Դրական եւ նոյնքան ալ ուրախալի երեւոյթ:

Բայց...ճանաչումը բաւարար չէ լուծելու համար մեր դատը:

Կարելորդ, արդար լուծումն է, որ կ'ենթադրէ խլուածն ու կողապտուածը, իւրացուածն ու գողցուածը վերադարձնել բուն տիրոջ, իրաւատիրոջ եւ նման սկզբունքներու շուրջ կարելի չէ սակարկել:

Ու մեզի համար այլեւս նորութիւն չէ, որովհետեւ նաեւ դառն իրականութիւն է, որ միջազգային դիւանագիտութեան ասպարեզին մեջ քաղաքական շահեր հետապնդելու համար, յաճախ մեր ողբերգութիւնը կ'օգտագործուի, անկախ մեր կամքէն, սաստելու համար Թուրքիոյ ոտնձգութիւնները: Անպայման քաղաքագետ ըլլալու պէտք չկայ հասկնալու համար այս իրականութիւնը եւ մանաւանդ ներկայ մեծ պետութիւններու դիւանագիտական խաղերն ու անոնցմէ ծնած շահերը:

Անոր համար եւ արդարօրէն բոլորս ալ, մեր աչքերը կը կեդրոնացնենք մեր միակ հայրենիքին վրայ: Ազատ եւ անկախ Հայաստանին: Ահա կայ եւ կը մնայ Եականը:

Ու կ'ակնկալենք..., որովհետեւ...:

Բոլորս ալ կը հաւատանք եւ կը հաստատենք, որ մեր հայրենիքը, մեր ազգային դիմագիծի հիմքն է: Ու նորութիւն չէ, որ ան վերագտած է իր ազատ եւ անկախ ապրելու հպարտութիւնը: Ու տակաւին տարի մը առաջ էր, երբ Հայաստանի մեջ նոր յեղափոխութիւնը եկաւ: Ու արդէն տեսանելի է, թէ նոր կեանքի բոցը վարակած է մեր հոգին:

Բոլորով հաստատեցինք, թէ մեր անկախութիւնը ալ ժողովրդականացած է:

Ու երեւակայեց՛ք, ի՞նչ հրաշքներ կրնայ գործել անկախ մեր հայրենիքը: Ու միշտ հպարտ պէտք է նշել, որ աշխարհի տարածքին, բոլոր հայերուս սիրտն ու միտքը միշտ եղած է եւ կը մնայ հայրենիքի հետ: Առանց սակարկութեան՝ նուիրուածութիւն:

Հաւատքի աղբիւր է Հայաստանը, ոչ մէկ կասկած, որ մեզ կը միացնէ իբրեւ միասնական մէկ ազգի բաղադրիչ տարր:

Նաեւ կրնանք բացազանչել, թէ Հայաստանը իր ներկայ ժողովրդականացած կառոյցով, մեր պայքարի յուսալի յենարան ալ է, հայ ժողովուրդի նպատակներու յաղթանակին, ամենէն ամուր խարիսխն ըլլալով հանդերձ: Որովհետեւ ներկայ իր սահմաններով, ան կը հանդիսանայ պատմականօրէն Մայիսեան մեր առաջին հանրապետութեան շարունակութիւնը, ուր խտացուած են ազգային արժէքներ, որոնք ժառանգուած էին հազարամեակներու մեր պատմութեան ընթացքին: Եւ վերջապէս՝ Հայաստանը է՛ եւ կը մնայ համայն հայութեան ազգային գոյատեւման ապահով վստահութիւնը, ինչ որ Սփիւռքը չունի:



ՄԵԿ հայրենիք ունինք, որուն շուրջ միաւորուած են Հայաստանի եւ Սփիւռքի հայուքիւնը, հաւասարապէս եւ անկեղծ:

Ու հաստատապէս՝ մեր մօտ հայրենիքի սերը ո՛չ տալ է, ո՛չ առնել է, այլ՝ ըլլալ է:

Իսկ հիմա, այս բոլորէն ետք, երբ կը խօսինք Հայոց Յեղասպանութեան եւ մեր արդար դատի ու մեր պահանջատիրութեան ոգիի եւ իրաւունքներու մասին, կը կրկնեմ, որ ազատ եւ ինքնիշխան Հայաստանը, իր քաղաքական բոլոր կառոյցներով պարտաւոր է հանդէս գալ տարագիր հայութեան հայրենիքի օրինական պահանջքին:

Այլ խօսքով աջակից եւ յանձնառու մնալ համայն հայութեան բոլոր իրաւունքներուն:

Ահա թէ ինչո՞ւ Յեղասպանութեան առնչուող բոլոր հարցերուն, կետերուն, լուծման տանող բանակցութիւններուն եւ խորհրդածութիւններուն մէջ Հայաստան-Սփիւռք համակարգուած աշխատանքը Էական եւ կենսական կը նկատեմ: Ահա թէ ինչո՞ւ այս «Ապրիլը» տարբեր պէտք է, որ ըլլայ իր նախկիններէն:

Ըլլանք համախմբուած եւ համագործ, կը կրկնենք ու կրկնած ենք միշտ, մանաւանդ, որ ներկայիս զոհի բարդոյթ չունինք ալ: Պատեհութեան եւ պոռոտախօսութեան զոհը չդառնանք: Պատմութեան անգիտութիւնը ներելի չէ: Պայման է հայրենի իշխանութիւնները աշխարհի տարածքին վառ պահեն հայութեան մտքին մէջ պահանջատիրութեան ոգին, որպէսզի վաղը մեծցող մեր նոր սերունդը չմսի:

Ազգային յանձնառութիւն է այս: Էական եւ կենսական: Ծարաւ է մեր ժողովուրդի ոգին: Պէտք է զայն ազգային գիտակցութեամբ լիցքաւորել:

Մեր բոլորի փափաքն ու երազն է, որ ներկայի խելամիտ իշխանութիւնը, իր պետական քաղաքականութիւնը շաղախե առողջ ձգտումով: Այլ խօսքով՝ պետական մտածողութեան մէջ ազգային պահանջատիրութիւնը դասե առաջնահերթ:

Պայման է, որ ներկայիս, Հայաստանի «ծայնը» ըլլայ յստակ, զօրեղ, մաքուր, հնչեղ եւ ամրակուռ խարիսխի վրայ:

Նոր սերունդ մը ունինք, համբուրելի գիտակից եւ օժտուած: Պահենք զայն հաստատ մեր ազգային հրապարակին վրայ: Եւ որովհետեւ պահանջատեր ալ ենք, ուստի այդպէս ալ շարունակենք նոյն ոգիով թրծել:

Հայաստանէն արձակուած խօսքերուն, աշխատանքներուն եւ բանակցութիւններուն կ'ակնկալենք, որ միշտ տրուի աւելի յստակ ազգային եւ քաղաքական գոյն ու բովանդակութիւն, որպէսզի կարելի ըլլայ նուաճել ազգային մեր բոլոր իրաւունքները:

Մնանք պահանջատեր կ'ըսեմ եւ կը կրկնեմ, ի խնդիր մեր ժողովուրդի թիւի, հողերուն, մշակոյթին, նիւթական հարստութեան զգալի կորուստներուն արդարութեան սիրոյն:

Չկորսնցնենք ազգային մեր ետը:

Այս բոլորը յանդակութեան եւ կամքի ուժի կը կարօտին: Դարերու մեր պատմութիւնը մեզի կը ներշնչէ ինքնագիտակցութիւն: Ուղղութիւն կու տայ ապագայ կարելիութիւններուն:



Տէր մանք մեզմէ խլուած հողին եւ ջուրին: Միջազգային ընտանիքէն Տեղասպանութեան ճանաչման պահանջքը բաւարար չէ: Զխաբուհիք: Մեզի արդարութիւն է պետք եւ անպայման՝ յատուցում:

Լաւ յիշեցէ՛ք, արդար իրաւունքը չի մեռնիր, եթէ մենք ազգովին պահանջատէր մանք: Մանաւանդ՝ միասնակամ:

Ուխտ է այս մէկը:

Բոլորս կը հաւատանք նման պայթարի ուժին եւ յաղթանակին:

Ու համայն հայութիւնը իր պետութենէն կը սպասէ, կ'ակնկալէ նման արդար լուծումներու իրականացումը:

Այս է Ապրիլեան օրուան խորհուրդը.կը կարծեմ:

Այս է նաեւ ընդհանուր յայտարարը, որ ի մի պիտի բերէ հաւաքական եւ անհատական հայ բոլոր միաւորները: Վստահի՛նք մեր սեփական մտքին, ուժերուն եւ ազգային շահերուն: Կարելորդ երթն է, նոր յաղթանակներու, ձեռքբերումներու ճանապարհը:

Տեղասպանութիւն տեսնող ազգ մը չի կրնար դաւաճանել իր հայրենիքին, իր ժողովուրդին եւ իր ազգին:

Մեր պամութիւնը տակաւին թարմ է եւ կը շնչէ ու ես նման մտածումներով ուրիշ աշխարհէ չէ որ կու գամ:

Գրական-Մշակութային

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ՍԵՐ ՔԱՂԵՑԻ

Սեր քաղեցի արշալոյսէն, երկինքներէն, վառ աստղերէն
Ծառ ու ծաղկէն, խոնարի խոտէն, գարնանային բողբոջներէն
Տերեւներու թրթիռներէն, սիրահամբոյր անոնց դողէն
Ու գգուանքէն մեղմ հովիկին որ կարծես թէ մեղեդի մ'եր...
Սեր քաղեցի ժպիտներէն, անկեղծ խօսքէն, շշուկներէն
Մանկան մաքուր, լոյս նայուածքէն, ուրախ-գուարթ ճռուողիւնէն
Աշխատանքէն այն տքնաջան որ կ'ընծայուէր հոգեւունէր
Ի սեր մարդուն, ի սեր ազգին, ընտանիքին սիրապարգեւ...
Սերն ամենուր լուսայորդէ՛ր ու վարարէ՛ր աշխարհը ողջ
Կուտա՛կ-կուտա՛կ ամբարեցի բուռ մը սրտիս բաժակին մէջ
Ու կարծես թէ տիեզերքն ամբողջ ես գրկեցի սիրագորո՛վ
Ու կարծես թէ տիեզերքն ամբողջ ամփոփեցի իմ սրտիս մէջ...

ԵՐԱՆ

.....

ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆ



Սիրեցի քե՛զ, անկեղծութի՛նն

Ձերթ անդիմակ, ջինջ Էութին

Ցոլքը վճիտ հոգւոյս համակ

Որ ճաճանչէր լոյսի նման...

Եւ որքան ալ պղծեցին քեզ

Դիմակաւոր մարդիկ յաճախ

Դուն մնացիր միշտ ալ անեղծ

Յոգւոյս որպէս լոյս ճառագայթ...

Դուն կը շողաս փայլովդ հին

Ինչպէս հոգին սուրբ հայկական

Ձոր ցեխն անգամ պիտ' չի կրնայ

Աղարտել խորքն իր լուսածին...

ԵՐԱՆ

.....

ԴԵՌ ԿԸ ՍՊԱՍԵՄ

Ես կը սպասեմ դեռ այն տողին

Որ պիտ' դառնայ հոգւոյս ցոլանք

Սրտիս թրթիռ ու վառ դիւթանք

Յրաշք տողին այն լուսածին...

Ես կը սպասեմ դեռ այն խօսքին

Որ պիտ' դառնայ հրաշք բանալի

Կուղպ սիրտերը բանայ յանկարծ

Սիրտէ ի սիրտ դառնայ ծիածան...



Դեռ կը սպասեմ այն քերթուածին

Որ երկնի վրայ գրուած ըլլայ

Ըմպեմ անոր լոյսը վճիտ

Արարիչին ես մօտենամ..

Եւ կը սպասեմ այն աղօթքին

Որ պիտ' բխի խորքէն հոգւոյս

Թակէ դուռը Արարիչին

Գտնէ սիրտը տիեզերաշունչ...

ԵՐԱՆ

.....

ԹԵ ԿԱՐԵՆԱՄ

Յիւլէ մը լոյս թէ կարենամ

Բաշխել կեանքին ու աշխարհին

Յոգնիւթէս սիրաշաղախ

Կ'երջանկանամ...

Յիւլէ մը սեր թէ կարենամ

Սերմանել ես սիրտերուն մէջ

Սիրանիւթէս լուսաշաղախ

Կը գոհանամ..

Շող մը հաւատք թէ կարենամ

Ես ներշնչել հոգիներուն

Յաւատքէս բորբ, հրաշալոյս

Կը բազմանամ...

Շող մը արեւ թէ կարենամ

Վառել մթնած սրտերուն մէջ

Յոգիիս վառ արեգակէն



Կ' յաւերժանա՛մ:

ԵՐԱՆ

.....

ԹԵ ՉԳԱՅՈՒՄ ՉՈՒՆԻՔ

Թե զգացում չունիք, մի՛ գաք մօտ գիրիս
Մեն մի բառն անոր սրտիս տրոփիւմն է
Մեն մի բառն անոր հոգւոյս խոր հեւքն է
Սառնասիրտն ինչպէ՛ս պիտ' հասկնայ զիս....

Թե սեւեռուած էք լոկ ձեր նեղ ես-ին
Անհաղո՛րդ այլոց ցաւ, տառապանքին
Մի՛ մօտենաք իմ ապրուած գիրին
Յոն կրա՛կ կայ սրտի, անծանօթ ձեզի...

Թե կը յոխորտաք լոկ ձեր սառն միտքով
Որ գիտէ հաշուել սեր, խի՞նդ ու կարօտ
Մի՛ մերձենաք դուք սիրաջերմ գիրիս
Ուր ամեն ապրում զարկն է իմ սրտին....

ԵՐԱՆ

.....

ԵՐԿՐԻՍ

Եւ ամեն պահ քուն թէ արթուն
Որոնեցի քե՛զ, լուսաւոր
Երազներուս, խոկումներուս
Լուսաղբիւրն ես, իմ հեռաւո՛ր...
Ի՞նչ հեռաւոր, սրտի՛ս մէջ ես



Անոր զարկն ես ու տրոփիւնը

Առաւօտեան բարի լոյս ես

Գիշերային հուսկ աղօթքը...

Յոգիս ճախրէ միշտ դէպի քե՛զ

Իր կարօտի լոյս թելերով

Երկինքներուդ մէջ թեւածէ

Լուսահամբո՛յր, սիրագորո՛վ...

Եւ որքան ալ ամպ ու թախիծ

Կուտակուին իր փոքրիկ սրտին

Ան կը ցնծայ խիստով մ'անափ

Թէ երկինքդ լուսաշողայ..

Միայն թէ դուն, երկի՛ր իմ թանկ

Մնաս խաղաղ, լուսապայծառ

Միայն թէ դուն, մա՛յր թանկագին

Ժպտիս շէնշող ու երջանիկ...

ԵՐԱՆ

.....

ԱՂՕԹՔՍ

Խոստովանանք ես խղճի պէս մաքուր

Խօսք ես ի խորոց սրտիս իմ անեղծ

Յզօր ապաւէն հոգւոյս թափառուն

Մտերիմ զրոյց Արարիչին հետ...

Լոյս ու յոյս ես վառ մթին խաւարին

Խարիսխ ես ամուր մրրիկներուն դէմ

Յաւատք ես անխախտ խառնաշփոթին

Եւ սէր ես առկայծ ու լուսահեղեղ...

Ալեկոծ ծովուս՝ նաւահանգիստ ես



Տառապանքիս մէջ՝ բուժիչ բալասան
Սրտիս վերքերուն՝ ամոքիչ դարման
Առանձնութեան մէջ՝ անհուն տիեզերք..
Խնդութեանս մէջ՝ կոչ զգաստութեան
Մոլորութեան մէջ՝ ահեղ լուսարձակ
Սայթաքումներուն՝ գթած, ողորմած
Դժուարութեան մէջ՝ նեցուկ լուսարար...
Մեզ ու մշուշին՝ պայծառ արեգակ
Յուսահատութեան՝ վեհ սփոփարար
Բիւր խռովքներուն՝ հրաշք խաղաղարար
Ու մորմոքներուն՝ մշտաշող բերկրանք...
Քեզ կ'ապաւինի հոգիս խռովայոյզ
Ուրախութեան թէ տագնապի պահուն
Ու բառեր պետք չեն որ ես խորզգամ
Ուժդ հրաշագործ եւ սիրավարար...
ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Գրական-Մշակութային

Բաց Նամակ Պատգամաւոր Նարինէ Թուխիկեանին Եւ Մայրենիի Պաշտպաններուն

ՅԱԿՈՒ ՊԱԼԵԱՆ



Հարազատի յեղափոխութեան մը սպասումով...

Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւոր Նարինէ Թուխիկեանի արեւմտահայերէնի տեր կանգնելու օրէնսդրական նախաձեռնութիւնը գիս կը մղէ մտածելու ընդհանրապէս հայերէնի պաշտպանութեան մասին:

Նարինէ Թուխիկեան գիտէ, որ լեզուն կը պաշտպանուի, պետութիւններ կը պաշտպանեն իրենց ազգային լեզուն, ունին կաճառներ, կը հրատարակեն լեզուի ուսուցման համար պատշաճ դասագիրքեր, կը պատրաստեն ուսուցիչներ: Ինք, օրինակելի յանդգնութեամբ կ'ըսէ, որ Հայաստանի պետութիւնը տեր պետք է ըլլայ արեւմտահայերէնին, քանի որ ան կը գտնուի վտանգուած լեզուներու շարքին, այդ հունով ալ տիրութիւն ընելով այդ լեզուով ստեղծուած հարուստ գրականութեան:

Ազգային Ժողովի յարգելի պատգամաւորները իրենք իրենց եթէ քանչորս ժամ արձակուրդ տան, եւ իրենց ձեռքին թուղթ-մատիտ առած, թռչակառու մամիկի եւ պապիկի պէս նստին հեռատեսիլի պատուհանին առջեւ, եւ բծախնդրութեամբ արձանագրեն յարգելի պատգամաւորներու, վարչապետի, նախարարներու քաղաքական գործիչներու խօսքին մէջ ներխուժած օտար բառերը, կ'որոշեն քայլ պահել Նարինէ Թուխիկեանի հետ, կ'ունենան օրէնսդրական նախաձեռնութիւն, հայերէնի բառազանձը ազատագրելու համար գաղութացումէ, (եզրը լեզուաբան Հաժեժ գործածեց ֆրանսերէնի համար ընդդէմ ամերիկերէնի ներխուժման), որուն եզրայանգումը մեր հայրենիքին մէջ ապրելով հանդերձ՝ օտարումն է: Օտարում, այլասերում, թէեւ արդիականացած քաղաքական բարբառով կ'ըսենք alienation:

Բայց քանի որ լեզուական մանրութներով զբաղելու ժամանակ չունին յարգելի պատգամաւորները, վարչապետը, նախարարները եւ քաղաքական գործիչները, ես փորձեցի ըլլալ իրենց ականջը եւ գրիչը, արձանագրելով գէթ մէկ մասը այն բոլոր խորթ եւ անհարազատ բառերուն, որոնցմէ եթէ հրաժարին եւ հրաժարինք, ոչ Հայաստանի տնտեսութիւնը կը վնասէ, ոչ արտաքին յարաբերութիւնները կը խանգարուին, ոչ ալ մեր ցուցադրած եւ ցուցամոլիկ



գաղափարները կ'աղբատանան: Իւրաքանչիւր քաղաքացի նախ իր տան շեմը պէտք է մաքրէ, այս պարագային հայերէնի պաշտպանութեամբ, որպէս օրինակելիութիւն, պէտք է սկսի վերի յարկերէն:

Այս ընելու համար, Լեզուի Պետական Տեսչութիւնը պէտք է մնայուն կայք հաստատէ Ազգային Ժողովին մէջ, եւ իւրաքանչիւր խորթ բառ արձանագրէ ժողովասրահի այն պաստառի կողքին ուր կ'երեւին քուէարկութիւններու արդիւնքները: Կամ իւրաքանչիւր խորթ բառի համար հաստատուի տուգանք: Վստահ եմ, այդ տուգանքներու գումարներով բազմաթիւ բնակարաններ կարելի կ'ըլլայ կառուցել եւ տալ աներդիքներու:

Կոորտինացման, Էվոլուցիա, Ֆաունտըր, Էկոնոմիկա, տեխնոլոգիա, կոնստրուկտիֆ, այդ ընթիմով, մէսէճ, քատրեր, ֆինանսաւորում, կապիտալ ներդրումներ, ինտելլեկտուալ, սոցիալական աքտ, կրաֆիկ, մեխանիզմ, սպեցիֆիկ, երեխաների տրաֆիկ, ատմինիստրատիֆ, կոնսենսուս, ինտենսիվ եւ դեռ անխուսափելի պրոբլեմները, ակտիվութիւնները...

Թերեւս Ազգային Ժողովը, Ժողովուրդի լեզուի մաքրութեան նախանձախնդիր, կը նախաձեռնէ Ազգային Ժողովի նիստերու ընթացքին գործածուած օտար բառերու դէմ պայքարի, Նոյնիսկ եթէ անոնք մէկ դարու աւանդութեամբ տուն-տեղ եղած են: Նման վերաբերում օրինակ կ'ըլլայ լրատուամիջոցներուն եւ Ժողովուրդին: Ազգային Ժողովը ինչպէ՞ս կ'ընդունի, որ փոխադրամիջոցներու նախարարութիւնը կոչուի տրանսպըրտի նախարարութիւն:

Նարինէ Թուֆիկեան հայերէնի պաշտպանութեան եւ գտման ազնիւ մտահոգութիւնը ինչո՞ւ պիտի չփոխադրէ քաղաքացիի առօրեային, հաղորդակցութեան եւ աշխատանքի մակարդակին, գործածուող բոլոր օտար բառերը աստիճանաբար հեռացնելով հայերէնէն: Ինչո՞ւ կանաչի վաճառողը անհարազատ պետրուշքան եւ մաղտանոսը պիտի գործածէ, երբ մենք հայերէն բառ ունինք, ազատքեղ, միթէ՞ ան տգեղ է օտար բառերուն բաղդատած, կամ եթէ հայերէն բառը գործածենք այդ համեմին հա՞մը կը փոխուի: Նոյն հունով՝ բաղրիջանը, բիբարը, եւ բոլոր միւս օտար բառերը...

Պատգամաւոր Նարինէ Թուֆիկեանի նախաձեռնութիւնը՝ արեւմտահայերէնին տիրութիւն ընելու՝ դրական ընթացք է: Բայց եթէ այդ տիրութիւնը պիտի ըլլայ զոյգ աշխարհաբարներու կողք կողքի ուսուցումով, ան պատճառ պիտի ըլլայ որ արեւմտահայերէնն ալ ողողուի օտար բառերով, այդ պիտի նշանակէ այդ լեզուի այլասերումը՝ սեփական երկրին մէջ, երբ արտասահմանի մէջ ցարդ ան կրցած է համեմատական մաքրութիւն պահել:

Քիչ մը քաջութեամբ քայլ մըն ալ դէպի առաջ ուստում ընելով, ինչո՞ւ Ազգային Ժողովին չներկայացնել դասական ուղղագրութեան վերականգնումի առաջարկ, որպէսզի գրաբարը, արեւելահայերէնը եւ արեւմտահայերէնը իրարմէ խորթացած չմնան: Դժուարութիւններ պիտի ըլլան, բայց եթէ նկատի ունենանք այն բոլոր առաւելութիւնները որոնք պիտի հետեւին նման բարեկարգումի, ապագայատես ղեկավարութիւնը պահիկ մը անգամ չի տատամսիր:

Արեւմտահայերէնի պաշտպանութիւնը դրական վերաբերում է: Իսկ հայերէնի պաշտպանութիւնը իր հարազատութեամբ, մեր խօսքին եւ գիրին մէջ, ազգային հիմնարար քաղաքականութիւն է:



Եւ քանի որ կը խօսինք թաւշեայ յեղափոխութեան մասին, ինչո՞ւ չիրականացնենք հարազատի յեղափոխութիւն մը... Արգիլուած չեն ոչ երազը եւ ոչ յոյսը, անոնք լծակներն են յեղափոխութեան:

Ազգային ժողովի յարգարժան պատգամաւորները գիտեն, թէ ինչպէս, մեր ճակատագրին հետ հանգունակութիւններ ունեցող ժողովուրդ մը իրականացուց իր լեզուական յանդուգն քաղաքականութիւնը...

Եւ կը յուսամ, որ Նարինէ Թուխիկեան կը տեսնէ այս տողերը, կամ զանոնք իր ուշադրութեան յանձնողներ կ'ըլլան:

ՔԱՌԵԱԿՆԵՐ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Գիրս բխումն էր սիրակեզ սրտիս
Չերթ զուլալ ջուրը՝ վարար աղբիւրին
Ի՞մ յանցանքս էր որ ան լոկ հասաւ
Պապակ սիրտերէն քիչերուն միայն...

.....

Բարին շողշողայ ադամանդի պէս
Թէ սիրտդ բարի տրոփէ կրծքիդ տակ
Փայլն անոր լոյս տայ մթան մէջ անգամ
Սիրտեր ջերմացնէ զերթ անմար կանթեղ...

.....

Գլուխ գովանէն հեռու միշտ կեցիր
Չունեցածը ան կը գովէ, գիտցի՛ր
Որ բեզ կըլանէ խօսքերով պատիր
Գործն է միշտ մարդուն ճշգրիտ հայելին...

.....

Շատ եմ տեսեր գրիչի մարդիկ
Որ ծռմռին յանուն շահին
Եւ անտեսն մարդը արդար



Ծախելով խիղճ, գրիչը ազատ...

.....

Կաղանդի մէջ, Ս. Ծննդեան

Մոգական բան մը կը փնտռենք

Առօրեայի սիրտմաշուփէն

Սուրբ հեքիաթը լուսածորան..

.....

Չեմ սիրեր երբ բուժ հաշիւը

Մտնէ սիրտէն, հոգիէն ներս

Այլասերէ մաքուր սերը

Առեւտուրի զայն վերածէ...

.....

Կախարդանք է կեանքը համակ

Երկինք, արեւ, լուսին, աստղեր

Մարդուն հոգին կը կախարդեն

Աշխարհն համակ հրաշք կ'ընծայեն..

.....

Բարի ժպիտ դուն տարածէ՛

Մարդկանց օրը պայծառացո՛ւր

Ժպիտն անկեղծ եւ սրտաբուխ

Չրաշագործ դեղ-դարման է...

.....

Բառի տարազն շատ նեղ եկաւ

Յոյզին, խոհին անպարագիծ

Բառը սեղմեց գերթ կաղապար

Չհասաւ ան թռիչքի սլացքին...

.....



Տրտմութիւններ կան լուսաւոր անչափ

Այնքան գեղեցիկ եւ ազնուական

Որ հոգիդ կ'օրրեն թախիծով անափ

Ձերթ աշնան դալուկ ծառն տերեւաթափ...

.....

Թէ բառերդ չկարենան

Հասնիլ, դպչիլ սիրտին այլոց

Մի՛ մեղադրեր սիրտը անոնց

Այլ՝ բառերդ անսէ՛ր, անհրա՛յրք...

.....

Բառդ, տողդ օժէ սիրով

Ձանոնք թաթխէ արիւնիդ մէջ

Եթէ կ'ուզես շունչ տալ անոնց

Արարչական հրայրքով վստմ...

.....

Պատուէրով գիրն արհեստական

Չի յուզեր բնաւ, չառիւթներ

Սիրտէն բխած գիրը միայն

Գերէ հոգին, զայն կախարդէ...

.....

Լոյսը բարի ընդդէմ չարեաց

Կը պայթարի ամէն վայրկեան

Ձերթ լուսաբացն առաւօտեան

Ճառագէ լոյս մթնահալած...

.....

Եւ ամէն անգամ որ չարը շահի

Ես ինձ հետ միայն կռիւ կ'ունենամ



Թե արդե՞օք չարին մէջ բաժին չունիմ

Թեկուզ վիրաւոր անտարբերութեամբ...

.....

Թե սիրտը սրտին անհաղորդ մնայ

Թե մարդիկ սառն անտարբերութեամբ

Նային քու բառիդ, տողիդ տագնապած

Կեանքը կը դառնայ անիմաստ մի բան...

.....

Չեմ սիրեր ես ախն ու վախը

Ողբերգակներն եղերերգու

Որոնք չկան երբ կայ կեանքը

Եւ յայտնուին լոկ յետ-մահու...

.....

Թող տողերս չնկատուին

Քանզի դեռ ողջ եմ, կենդանի

Մարդիկ միշտ ալ կը նկատեն

Երբ ա՛լ չկաս, երբ մեկնած ես..

.....

Կան որ մեկնին անակնկալ

Որ ցնցուի՛ս, զգաստանա՛ս

Լա՛ւ իմանաս որ հիւր ես միայն

Աշխարհիս մէջ հրաշանման...

.....

Հեռաձայնը տխուր հնչեց

Գուժեց բօթը մօրս մահուան

Տարիներ են անցեր անկէ

Բայց զնգոցը դեռ կը հնչէ...



.....

Պահեր կան լուռ, անչափ խորունկ

Որ միշտ կ'ապրին մեր սրտին մէջ

Տարիները շատ անգոր են

Ձնջելու պահն խորհրդայոյ՞՞.

.....

Անտարբերներ՝ որքան ուզես

Ցաւիդ, տողիդ ու տագնապիդ

«Ամէն մարդ իր հաշիւն ունի»

Սա է անոնց կեանքի օրէնքն...

.....

Շահ ու հաշիւ չփնտոցի

Շիտակին լոկ գլուխ ծռեցի

Շահերս բիւր տանուլ տուի

ճշմարիտին փայլով արբշիռ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ